



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

34րդ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԴԱԽԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂԶ ԴԱՍԸՆԹԱՅԲ
ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆՈՐ ԴՊՐՈՅ

Բարոյագիտութիւն, Քաղաք. կրթութիւն,
Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուարանութիւն,
Դիտութիւններ, Մայրենի լեզու

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Չ Ա Ր Դ

Տարրական Հերացք

Է. ՊՐԱԿ

ԳՐԻՔ ԱՇԱԿԵՐՏՈՆ

معارف نظارت جلیله سنک ۱۸۷۷ نومرولی و فی
تاریخلو رخصتنامه سبيله طبع او

491.99-8

Դ-23

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Չ

ԽՐԱՏ ԴԱԽԹԵԱՆ

1902

2. Առած. — Քայ մարդը նախ կ'ուզի վստեղեկ հեռանալ, բայց երբ տեսնի որ անխառն է, ամեն բան աչքը կ'առնի:

2. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Վաստատարին. — Միտաք ազէկ տղայ էր, իր մայրը շատ կը սիրէր, բարիք կ'ընէր շատ անգամ և իր դասերն ալ ազէկ կը պատրաստէր: Բայց դժբախտաբար վատասիրտ էր: Միտաք մուծէն կը վախնար, միւս մի՛նակ չէր կրնար մէկ սենեակէն միւսը երթալ: Այս հերիք չէր, ուրիշ աւելի մեծ վատութիւն մ'ունէր. — երբ յանցանք մը գործէր, ուրիշին վրայ կը ձգէր, սուտ կը խօսէր՝ երգում կ'ընէր թէ ինքը չէ ըրած:

Այս աղտոտ բնավորութիւնը շատ գէշ ըրաւ Միտաքին վիճակը, որչափ մեծցաւ՝ ծուլացաւ: Միտաք համարձակութիւն չունէր մէկու մը ներկայանալու, գործ ուզելու, գործ տեսնելու, ասոր համար թշուառ եղաւ՝ երբ դժբաղդաբար իր հայրը մեռաւ: Կը տեսնէ՞ք, վատաստութիւնը ամէն տեսակ թշուառութիւն կը բերէ մարդուս գլխուն: Պէտք է մանուկ հասակէն ուղղել այս թերութիւնը:

3. Առած. — Վաստասիրտ մարդը ամենեւնի քերէ գործերէն իսկ կը վախնայ:

3. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Քաջութիւնը գեղեցիկ բան է. — Ատենով թշնամիներ կուգան Հոռոմ քաղաքին վրայ որ զայն առնեն: Բայց քաղաքը մտնելու համար պէտք էր կամուրջէն անցնելին: Թշնամիները երբ կամուրջին կը մօտենան, քաջ երիտասարդ մը Որատիոս կոչէս անունով, դէմ կը դնէ անոնց, մինչեւ որ իր ընկերները ետեւի կողմէն կամուրջը կը փլցնեն: Այն աղբն իր հագուստներով ու զէնքերով գետին մէջ կը նետուի և լո-

զայով միւս կողմը կ'անցնի: Որատիոս աղատած էր ամբողջ քաղաքը, ամէն մարդ կը գովէր անոր ըրածը:

4. Առած. — Քայ մարդու մը հաւնար անխառնի բան չիայ:

5. Առած. — Այն մարդը որ միշտ փայտիսն ունի իր արտին մեջ, ուրիշին պաշտպանութեանը պէ՛տք չունի:

4. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Պատիւը կեանքէն նախանշար համարելու է. — Այո՛, մարդը իր պատիւը պահելու է, եթէ հարկ ըլլայ պէտք է կեանքը զոհէ պատիւը փրկելու համար: Ատենով, թշնամիներ նորէն կը յարձակին Հոռոմ քաղաքին վրայ: Քաղաքացիներուն մեծ մասը կը փախչի, մնացածն ալ քաղաքին մէջտեղը գտնուած ամուր բերդի մը մէջ կը մտնէ: Քաղաքին մեծերը, որ ծերունի մարդիկ էին, ամօթ կը սեպէին փախչիլը, ուստի իրենց տուներուն առջեւը կը նստին մարմարէ ակոռներու վրայ: Թշնամիները երբ կը տեսնեն այդ ծերունիները, կը սպաննեն զանոնք: Ծերունիներն իրենց կեանքը տուին, իրենց պատիւը մաքուր պահելու համար:

6. Առած. — Անպատիւ կ'ըսուի այն մարդը որ շահու հաւնար իր պատիւը ոճակիս կ'ընէ:

5. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Բնու պէ՛տք չէ վախնայ. — Վախ, ինչ ստորին բան է սա վախնալը, ինչ ամօթ բան: Տըզաքները պէտք է վարժուին բանէ մը չվախնալու, ո՛չ մուծէն, ո՛չ ալ ուրիշ ո՛րեւէ բանէ որ իրօք վտանգաւոր չէ: Անգամ մը Պետրոս պարտէզի մը մէջ կը պտուտէր: Հոն՝ վարը՝ շատ մը խոտեր բուսած էին: Երբ այդ խոտերուն մօտեցաւ, յանկարծ տեսաւ որ օձ մը գլուխը անկեր իրեն կը նայի: Պետրոս սարսափեցաւ, պոռայ և փախաւ: Բայց երբ պարտէզին ծայրն հասաւ, հոն կեցաւ ու դիտեց որ իր ետեւէն բան մ'եկած չէ: Պետրոս

ամչցաւ, ինքզինքը մեղադրեց. « Ի՞նչ կայ, ըսաւ ինքն իրեն, թող օձ մ'ըլլայ», ու գնաց նորէն վարի խոտերուն քով: Ի՞նչ տեսնէ աղէկ: Մուռումուռ փայտի կտոր մը...: Պետոս միտքը դբաւ անկէ յետոյ չվախնալ և կամաց կամաց քաջամբոս եղաւ:

7. Առած. — Երբ յանկարծ բանե մը կը վախենաւ, նորէն դարձիւր անոր քով գնա, վախը կ'անցնի:

8. Առած. — Վախիտ մարդը դժբախտ կ'ըլլայ:

6. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Պէտք է ներքական ցաւերու դիմանալ. — Չեղի բարեկամներէն մէկուն պատմութիւնը ընեմ: Այս տղան դպրոցէն ելլելէ յետոյ, դործ չգտաւ անմըջապէս: Մայր մ'ունէր և երկու քոյր. անոնց պիտի օգնէր: Ի՞նչ ընէր խեղճ տղան: Ստիպուեցաւ երկաթագործի մը քով աշկերտ ըլլալ: Շաբաթը պզտիկ բան մը կ'առնէր, առտուընէ մինչեւ իրիկուն կը չարչարուէր: Բայց շատ քաջ էր տղան, չյուսահատեցաւ, իր մօրը սիրոյն համար ամէն նեղութիւն քաշեց, վերջապէս այսօր նշանաւոր երկաթագործ մ'եղաւ: Հիմա երջանիկ է ինքը և երջանիկ ըրած է իր մայրն ալ:

9. Առած. — Ով որ քիչ մը նեղութեամբ չի կրնար դիմանալ, աւելի մեծ նեղութիւններու պիտի հարկաւոր:

7. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Պէտք է վիշտերու դիմանալ. — Այս տղաքներս, օր պիտի գայ որ ցաւեր ունենաք, վիշտեր կրէք, պէտք է քաջ ըլլաք այդ վիշտերուն, ցաւերուն դիմանալու համար: Դուք, փառք Աստուծոյ, քաջառողջ էք: Բայց չէ՞ք տեսած՝ նիհար, երեսներուն դոյնը նետած տղաքներ որ տունէն դուրս չեն կրնար ելլել. անոնք չիւանդ են: Աստուած չընէ, եթէ դուք ալ օր մը չիւանդանաք, պէտք է համբերութեամբ ցաւին դիմանաք:

2. ք տեսներ շատ անգամ աղքատիկ տղաքներ որ փողոցները կը թափառին՝ կիսամերկ, բոկոտն՝ իրիկունը չոր ու ցամաք հաց մ'ունին ուտելու, ու կը պառկին չոր կամ թաց գետնի վրայ: Անոնք կը դիմանան այդ վիշտերուն: Մենք ալ մարդ ենք, կարելի է օր գայ որ անոնց պէս աղքատանանք: Այն ատեն պէտք է որ քաջութիւն ունենանք, դիմանանք այդ վիշտերուն: Անոնք կ'անցնին և օր մը ուրախ օրեր կը յաջորդեն:

10. Առած. — Անեկ վիշտ քաջութեամբ սակեղու է:

11. Առած. — Հիսուսի է ան մարդը որ քաջութեամբ եւ առանց գակաւորուելու կը դիմանայ վիշտերու:

8. ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ. — Քաջութիւնը անպահաւառ պէտք է. — Լսեցէ՛ք պզտիկ տղու մը պատմութիւնը: Խորէն դեռ տասնընչինգ տարեկան էր երբ իր հայրը մեռաւ: Խեղճ տղուն մայրը շարունակ կուլար, որովհետեւ այլեւս պաշտպան մը չունէին: Պզտիկ Խորէն ամէն օր սիրա կուտար իր մօրը, և կ'ըսէր որ ինքը պիտի աշխատի իրենց համար: Եւ իրաւ ալ Խորէն գնաց դերձակ մը գտաւ և անոր ըսաւ որ զինքը քովն առնէ: Դերձակն այնքան հաւնեցաւ տղուն որ անմըջապէս զանի իր քովը պահեց: Խորէն աշխատեցաւ գիշեր ցորեկ և մայրը մխիթարեց: Եթէ Խորէն քաջութիւն չունենար, շատ թշուառ պիտի ըլլար ինքն ալ, մայրն ալ:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՐԹՆԵՐՈՐԴ ԱՄՍՈՒՍՆՅ՝

Ով որ քաջ է, առաքինի է, որովհետեւ ցաւերուն ու վիշտերուն կը դիմանայ, Կեսերի մէջ պէտք է վատասիրտ չըլլալ, վատասիրտ մարդը թշուառ կ'ըլլայ: Տղայ մ'իր պզտիկ հասակէն կը ցուցնէ քաջութիւն կամ վատութիւն: Ամէն առաքինի մարդ պատիւը նախամեծար կը սեպէ կեանքէն: Տղայ մը պէտք է ամենայ ինքրիմէ, երբ վախկոտ է, Կեսերի մէջ շատ անգամ դժբաղդութիւններու կը հանդիպինք, պէտք չէ որ վախնանք, համբերու և քաջ ըլլալու ենք, ուրախ օրեր կուգան:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1. ԴԱՍ — ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

1. — Ժողովուրդին մէջ ծագած վէճերը, անհամաձայնութիւնները և թեթեւ կամ ծանր խնդիրները Քաղաքային Դատարաններու (Մեհնախիկի նիզամիյե) առջեւ կը քննուին, կը դատուին և կը վճռուին: Ասոր կ'ըսուի դատավարութիւն:

2. Դատերը երկու տեսակ են. Հուզուզ (քաղաքային կամ առեւտրական) և ձեզու (պատժական):

Հուզուզի կը վերաբերին ամէն տեսակ առեւտրական խնդիրներէ ծագած վէճերը, այսինքն առնելիք-տալիքի, կալուածական գործերու, հողային սեփականութեան վերաբերեալ նիւթական կամ դրամական անհամաձայնութիւններ:

ձեզույի կը վերաբերին մարդ ծեծելու, կռուելու, նախատելու, վիրաւորելու, գողնալու, սպաննելու, խարդախելու պէս գործերը:

3. Հուզուզի դատերուն համար դատարանները (Մահիֆե) նիւթական յետար փոխարինելու վճիռ կուտան: Իսկ ձեզույի դատերուն համար յանցաւորին կուտան այլեւայլ պատիժներ. բանտարկութիւն, տուգանք, աքսոր, բերդարգելութիւն, մահու պատիժ:

4. ձեզույի վերաբերեալ դատերը երեք աստիճան են. Գապահար (կանոնադանցութիւն), ձիւնես (յանցանք) և ձիւնայեթ (ոճիւր կամ եղեռն):

1. Ո՛ր կը բնութիւն վիճերը: — 2. Դատերը բանի՞ տեսակ կ'ըլլան: Որո՞նք են հուզուզի դատերը, որո՞նք են ձեզույի դատերը: — 3. Հուզուզի դատերուն համար դատարանները ի՞նչ վճիռ կուտան: Իսկ ձեզույի դատերուն համար: — 4. Բանի՞ աստիճան են ձեզույի դատերը:

2. ԴԱՍ. — ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՆ ԱՍՏԻՃԱՆԸ

1. Նիզամիյե դատարանները երեք աստիճան են. Նախադատ (Պիսայեթ), Վերաքննիչ (Իսթիլաֆ) և Վճռաբեկ (Թեմեիզ) ատեաններ:

2. Գազաներու և Սանճագներու մէջ կայ Պիսայեթ մահիֆե: Վիլայեթներու մէջ կայ, Պիսայեթէն զատ, նաև Իսթիլաֆ մահիֆե: Իսկ Թեմեիզի դատարանը միայն Պոլսոյ մէջ է:

3. Օրինակ մը. — Ըսենք թէ Գրիգորը Մինասէն 500 դրչ. առնելիք ունի և Մինասի վճարեր իր պարտքը:

Եթէ երկուքն ալ Նախիյեի կամ Գազայի մէջ են, Գրիգոր Քաղաքային Նախադատ Ատեանին աղերսագիր կուտայ, որոշեալ օր մը դատարանին Նախագահը երկուքին ալ Կոչնագիր կը ղրկէ, զանոնք դատարան կը հրաւիրէ և դատը կը քննուի: Եթէ Գրիգոր կրնայ հաստատել իր առնելիքը, դատարանը կը վճռէ որ Մինաս այդ 500 դրուչը և դատարանի ծախքերը (Մուհաֆե մեսարիֆի) վճարէ:

Կրնայ ըլլալ որ Մինաս գո՞ն չըլլայ այս վճիռէն, այն ատեն վճռագիրն (իլալ) առնելով՝ կը դիմէ Վերաքննիչ Ատեանին, որ դատին վերաբերեալ թղթերը կը քննէ, և եթէ դատավարութեան մէջ թերութիւն մը եղած է, դատը վերաքննելու որոշում կուտայ: Ան ատեն նորէն Նախադատ Ատեանին մէջ կը դատուի:

1. Բանի՞ աստիճան են Նիզամիյե դատարանները: — 2. Ո՛ր տեսակ կը գտնուին ասոնք: — 3. Դատավարութեան օրինակ մը բախ: Ի՞նչ բան է Կոչնագիր (ձեկլ միւզեֆեֆեի): Ի՞նչ բան է Վճռագիր (իլալ): Գրիգորին ու Մինասին միջեւ եղած դատին մէջ ո՞վ է Դատարան (Միսսաի), եւ ո՞վ է ամբաստանեալ (Միսսաի աղեյն):

3. ԴԱՍ. — ՀԱՇՏԱՐԱՐ ԱՏԵԱՆՆԵՐ ԵՒ ՇԷՐԻՒ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

1. Դատարաններէ զատ, կան Հաշտարար Ատեաններ որոնք առնելիք-տալիքի ու թեկեւ յանցանքի դատեր կը քննեն ու կը դատեն:

2. Հաշտարար ատեան են գիւղերու մէջ Ինքիտար մեկնիսի և գիւղախմբերու մէջ Նահիյե մեկնիսի:

3. Դատեր ու վէճեր կան որ ո՛չ պատժական են ո՛չ ալ առեւտրական: Օրինակ. — Մարդ մը կը մեռնի և անչափահաս զաւակ կ'ունենայ. ասոր իրաւունքին պաշտպանն է Շերիի դատարանը (Մահիֆեմէյի շերիյե): Ասոր պէս ալ կը պատահին ուրիշ դատեր՝ էրիկ կնկան մէջ, մեռնողի մը ժառանգորդներուն մէջ, եւայլն: Այս տեսակ դատերը կը տ'անուին Շեյխ իսլամի դուռը (Պուրխ) և գաւառներու Շերիի դատարաններուն մէջ:

4. Քրիստոնեաներու այս կարգի ամուսնական, ժառանգական, պարէնի վէճերը կը քննուին Պատրիարքարաններու և Առաջնորդարաններու կողմէ: (ինչպէս մեր Պատրիարքարանին մէջ Դատաստանական Խորհուրդին կողմէ) և ասոնց տուած վճիռը վաւերական և ընդունելի է Քաղաքային դատարաններու առջև:

5. Քաղաքային պաշտօնեաներու դատերը Պետական Խորհուրդը կը վճռէ: Իսկ զինուորականներու դատերն ալ Սպարապետութիւնը:

1. Հաւատարմութեան (Տեղայնի տրիպի) պատժեր ի՞նչ է: — 2. Ո՞ր տեղեր Հաւատարմութեան կրնայ ըլլալ: — 3. Շերիի դատարանը ի՞նչ տեսակ դատերու կը կատարէ: — 4. Քրիստոնեայ ազգերու մեջ ընտանեկան, ժառանգական եւ պարէնի (նափազ) դատերը ո՞վ կը կատարէ: Ասոնց վճիռը վաւերական եւ ընդունելի՞ է Պետական Դատարաններու կողմէ: — 5. Պետական Խորհուրդը ի՞նչ դատեր կը վճռէ: Իսկ Սպարապետութիւնը:

4. ԴԱՍ. — ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1. Դատարանները կը կազմուին Նախագահէ մը (Քեյս) որ կ'ընտրուի Վեհ. Սուլթանին իրաւեով, և 3 կամ 5 անդամներէ (ազա) որոնք կ'ընտրուին տեղական Կառավարութեան Վարչական Ժողովներուն կողմէ: Նախագահին բացակայութեան ատեն, անդամներէն մէկը կրնայ փոխանորդել:

2. Ամէն կարգի դատարաններ կ'ունենան նաեւ քարտուղարներ (ֆեաքիս), արձանագրիչ պաշտօնեաներ (մուգայեիս), օգնական գրագիրներ, բարապաններ, եւն:

3. Դատ մը վարելու համար դատախազը (միսսաի) և ամբաստանաւորը (միսսաի ալիյի) կրնան անձամբ դատարան ներկայանալ և կամ փոխանորդներ (սալա վեֆիյի) զրկել: Այս փոխանորդութիւնը կը կատարեն օրէնսգէտ անձեր կամ փաստաբաններ:

4. Պատժական դատերու նախաքննութիւնը կը կատարէ Հարցաքննիչ Դատաւորը (Միսքանիսի) և այս քննութեան վերաբերեալ թղթերը կը զրկէ Ընդհ. Դատախազին (Միսսաի ունուաի) որ կը վճռէ կամ դատ վարելու պէտքը (չիզուալի մուհաֆեմե) և այն ատեն թղթերը դատարանին կը յանձնէ, և կամ դատաւարութեան տեղի չունենալը (մեկեի մուհաֆեմե):

5. Դատաւոր մը օրէնքի և արդարութեան համեմատ վճիռ արձակելու պաշտօն ունի. հետեւաբար պէտք է ըլլայ ուշիմ և մտացի, ուղիւստ և արդար, հաւատարիմ և վստահելի, լրջախոհ և անաչառ:

1. Դատարաններ ինչե՞րք կը կազմուին: — 2. Ուրիշ ի՞նչ պատժեանքներ կ'ունենայ դատարանը: — 3. Ի՞նչ է Միսսաի, ի՞նչ է Միսսաի ալիյի: Ասոնք երբ անձամբ չներկայանան դատարան, ի՞նչ կ'ընեն: Ո՞վ կրնայ փոխանորդ ըլլալ: — 4. Պատժական դատերու նախաքննութիւնը ո՞վ կը կատարէ: Թղթերը որո՞ւ կը զրկէ: Ի՞նչ ըսել է «չիզուալի մուհաֆեմե», ի՞նչ ըսել է «մեկեի մուհաֆեմե»: 5. — Ի՞նչպէս ըլլալու է դատաւոր մը:

ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



1. ԴԱՍ. — ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

1. Եկեղեցի. — Քրիստոսի հիմնած կրօնքը վսեմ ու բարձր է և կը կոչուի Քրիստոսնկուրթիւն որ բաժնուած է սա երեք եկեղեցիներուն, Արեւելեան եկեղեցի, Արեւմտեան եկեղեցի և Բողոքական եկեղեցի:

2. Արեւելեան եկեղեցի. — Արեւելեան կը կոչուի այն նախկին եկեղեցին զոր Քրիստոս հիմնեց Երուսաղէմի մէջ առաքեալներուն ձեռքով, որոնք յետոյ տարածեցին Հայերուն մէջ, նոյնպէս Յունաստան, Եգիպտոս, Փոքր Ասիա և ուրիշ տեղեր: Արեւելեան եկեղեցիներն են գլխաւորաբար Հայ և Յոյն: Թէեւ աղգով ու ծէսով իրարմէ կը տարբերին, բայց ունին միեւնոյն աստուածային գլուխը որ է Յիսուս Քրիստոս:

3. Հայոց եկեղեցին. — Հայոց եկեղեցին հեթանոսներուն մէջ անդրանիկն եղաւ: Ինչպէս տեսանք, Թաղէոս ու Բարթոլղիմէոս առաքեալները կազմակերպեցին զայն. և ասոր համար առաքելական է: Յետոյ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ և անոր յաջորդները քրիստոնէական հաւատքին փրկարար վարդապետութիւնն ամէն տեղ տարածեցին՝ քարոզելով ու եկեղեցիներ շինելով:

4. Արեւմտեան եկեղեցին. — Նախապէս Հռոմի մէջ հիմնուեցաւ. Արեւմտեան եկեղեցին որ յետոյ տարածուեցաւ Եւրոպա, Ափրիկէ և ուրիշ տեղեր: Այս եկեղեցին իրեն հոգեւոր գլուխ կ'ընդունի Պապը՝ որուն համար Պապական անունն ալ կը կրէ: Պապը կը ճանչնան իբրեւ յաջորդ Պետրոս առաքեալին:

5. Բողոքական եկեղեցի. — Բողոքականութիւնը Պապական եկեղեցիէն բաժնուած է: Մարտինոս Լուտեր անունով մէկը, որ աստուածաբան կրօնաւոր մ'էր, հակառակեցաւ, մեծ պայքարներ մղեց Պապական եկեղեցիին դէմ: Եւրոպական տէրութեանց միջոցաւ կազմեց եկեղեցի մը որ կոչուեցաւ Բողոքական = Բորքեքական եկեղեցի:

Լուտեր Եկեղեցիի եօթը Խորհուրդներէն՝ Մկրտութիւնն ու Ս. Հաղորդութիւնը միայն ընդունեց՝ մերժեց բոլոր առաքելական դարարողութիւնները: Բողոքականութիւնն, անհամաձայն ինք իր մէջ, բաժնուած է բազմաթիւ յարանուստութեանց:

1. Ի՞նչ կը կոչուի Քրիստոսի հիմնած եկեղեցին: Քանի՞ բաժնուած է: — 2. Ո՞րն է Արեւելեան եկեղեցին: — 3. Ի՞նչ գիտէ Հայ եկեղեցիին վրայ: — 4. Ի՞նչ գիտէ Արեւմտեան եկեղեցիին վրայ: — 5. Ի՞նչ է Բողոքականութիւնը եւ ո՞վ հաստատեց: Եօրը խորհուրդներէն որո՞նք կ'ընդունի Բողոքական եկեղեցին:



2. ԴՅՍ. — ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

6. Ժողովներ. — Հայց. Ս. Եկեղեցին երեք Տիեզերական ժողով կ'ընդունի.

1. Նիկիոյ ժողով. — Որ գումարուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի օրով, (Յ. Պրակ, էջ 15, Դաս 2):

2. Կ. Պոլսոյ ժողով. — Կ. Պոլսոյ պատրիարքներէն Մակեդոն ուղեց նորահնար վարդապետութեամբ նշանաւոր ըլլալ: Ասոր մուրրութիւնը կը վարդապետէր թէ Հոգին Սուրբ Աստուած չէ, այլ առաջին դասի հրեշտակ մը:

150 հայրապետ Կ. Պոլիս ժողովուեցան 381ին ու դատապարտեցին Մակեդոնը:

Այս ժողովը կը տօնենք Բուն Բարեկենդանի նախ-
ընթաց չարաթ օրը :

3. Եփեսոսի ժողով. — Գրիստոսի 430 թուականին ,
Կ . Պոլսոյ մէջ խնդիր եղաւ թէ Ս . Կոյս Մարիամը պէ՞տք
էր անուանել Աստուածածին , թէ լո՛ւ մայր Գրիստոսի :
Այն ատեն Յոյն պատրիարք Նեստոր եկեղեցիին մէջ ժո-
ղովրդին քարոզեց թէ Ս . Կոյս՝ Աստուծոյ մայրը չէ :

Թէ՛ողոս Յոյն Կայսրը 431ին ժողով կազմեց Եփեսոս
քաղքին մէջ : Ամէն կողմէ հաւաքուեցան 260 եկեղե-
ցական : Նեստորի մոլորութիւնը հերքուեցաւ այս ժողո-
վին մէջ որուն կանոններն ու պատմութիւնը բերին Ս .
Սահակի աշակերտները որոնք հոն ներկայ էին : Աշտի-
շատի եկեղեցական ժողովին մէջ 433ին , յարգութեամբ
ընդունուեցաւ Եփեսոսի ժողովին վճիռը :

Հայց . եկեղեցին կը տօնէ այս եկեղեցական ժողովն
ամէն տարի Ս . Աստուածածնի Վերափոխման Բարեկեն-
դանի նախընթաց օրը , Շարաթ :

3. Հայ եկեղեցիին ջրնուցած ժողովները. — Բացի այս
երեք ժողովէն զորոնք՝ Սուրբ կը կոչենք , որովհետեւ
ընդհանուր եկեղեցին իր ներկայացուցիչն ունեցած է ,
հաւատքի դաւանութեանց ու կանոնական վարդապետու-
թեանց մասին Յունական ու Պապական եկեղեցիներն
ուրիշ բազմաթիւ ընդհանրական ժողովներ ալ կ'ընդու-
նին , ինչպէս Քաղկեդոնի = Գասը-ֆոյի ժողովը 451ին :
Այդ ժողովներուն մասնակցութիւն չէ ունեցած Հայց .
եկեղեցին և զերծ մնացած է նորահնար վարդապե-
տութիւններէ :

6. Մեր եկեղեցին քանի՞ ժողով կ'ընդունի : 1. Նի-
կիոյ ժողովին մէջ ի՞նչ վնասուեցաւ : 2. Կ . Պոլսոյ ժո-
ղովին մէջ ո՞վ դասապարտուեցաւ Էւ ինչո՞ւ : Ե՞րբ կը
սօսենք Կ . Պոլսոյ ժողովը : — 3. Ինչո՞ւ գումարուեցաւ

Եփեսոսի ժողովը : — Քանի՞ եկեղեցական ներկայ եր
հոն : — Ի՞նչ կ'ըսէր Նեստոր : — Մեր եկեղեցին ալ ըն-
դունա՞ծ է Եփեսոսի ժողովին վճիռը , ո՞ր բուականին
Էւ ո՞ր ժողովի մէջ ընդունած է : — Ե՞րբ կը սօսենք Ե-
փեսոսի ժողովը : — 7. Երեք Տիեզերական ժողովներէն
զոս ժողովներ ալ կա՞ն : — Հայ եկեղեցին ինչո՞ւ չ'ըն-
դունիւր այդ մասնաւոր ժողովները :

3. ԳԱՍ. — Ս. ՂԵՆՈՆԳԵԱՆՔ ՈՒ Ս. ՎԱՐԳԱՆԱՆՔ

Տ . Քրիստոնէական հաւատքին պաշտպանութիւնը. —
Մինչ 451ին Քաղկեդոնի ժողովը կը գումարուէր , Ս .
Վարդան , Ս . Սահակ Հայրապետին թուրը , և Ս . Ղե-
ւոնդ քահանան , իրենց ձշմարիտ կրօնատէր ընկերներովը ,
հեթանոսներու դէմ՝ քրիստոնէական հաւատքի պաշտ-
պանութեան համար նահատակուեցան ու պահեցին մեր
Ս . եկեղեցիին գոյութիւնը :

Ս . Ղեւոնդեանք , իբրեւ սրբատէր հոգեւոր պաշտօն-
եայ Գրիստոսի Ս . Աւետարանին , իրենց անձր օրինակ
հանդիսացուցին ժողովրդին որ ամէն պարագայի մէջ
հաւատարիմ մնան իրենց Մաղբնի եկեղեցիին :

Ս . Վարդանանց տօնի օրը յիշատակ է Մեռելոց և տօն :

1. Ս . Վարդան Էւ Ս . Ղեւոնդ ի՞նչ բրին մեր կրօնը
պաշտպանելու համար : — Ի՞նչ եղան : — Ի՞նչ օրինակ
սուին առով : — Ե՞րբ կը սօսենք անոնց յիշատակը :

4. ԳԱՍ. — ԵԿԵՂԵՑԻ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ

Չ . Եօրը ասիման — Եկեղեցիին պաշտօնէութիւնը
կը բաժնուի եօթը աստիճանի : Այս աստիճաններուն
պէտքը հեռո՞հեռէ զգալի եղաւ , երբ եկեղեցին օրինա-
ւոր կազմակերպութիւն ունեցաւ :

1. Դպրութիւն. — Հինգ աստիճան (*) ունեցողը կը կոչուի Դպիր, որուն պաշտօնն է հաւատացեալներու ժողովին մէջ Ս. Գրքէն հատուածներ կարդալ: Դպիրները Շարականներ կ'երգեն, կը սաղմոսեն ու եկեղեցական պաշտամունքի մէջ կարեւոր մասը կը կատարեն:

2. Սարկաւագութիւն. — Դպրութենէ վեր աստիճանն է Սարկաւագութիւն որուն պաշտօնն էր բարեպաշտ ժողովուրդին տուրքը կարօտեալներուն բաշխել, աղքատներուն, որբերուն և այրիներուն պաշտպան ըլլալ: Հիմա այս պաշտօնը կը կատարեն Աղքատախնամները:

Սարկաւագը, Եպիսկոպոսին կամ Քահանային իշխանութեան տակ, կը մասնակցի ժամերգութեան. կանուխէն Մկրտութեան խորհուրդն ալ կը կատարէր: Առաքեալներու ատեն, կային Սարկաւագներ որոնք հաւատացեալ Յոյն հասարակութեան խնդրանքով ձեռնադրուեցան, ինչպէս Ս. Աստիաննոս, որ քրիստոնէական հաւատքով, յուսով ու սիրով լեցուած հաւատացեալ մըն էր: Քրիստոնէութիւնն աներկիւղ քարոզելուն ու Հրեաներու խտասարտութիւնը յանդիմանելուն համար, քարկոծմամբ նահատակուեցաւ ու եղաւ քրիստոնէական հաւատքի առաջին մարտիրոս:

10. Սարկաւագուիներ. — Առաքեալներուն ատեն կային նմանապէս կին սարկաւագներ կամ սարկաւագուիիներ որոնք հիւանդներն ու այրիները կը խնամէին: Մեր եկեղեցին կանուխէն զաղքեցուց կիներու պաշտօնը, բայց Հռոմէական եկեղեցին ունի մինչեւ հիմա Սարկաւագուհի ընտրելու սովորութիւնը, ծանօթ Մայրսպէսները: Հիմա թէեւ մեր մէջ ալ մայրապետներ կան, սակայն հին իշխանութիւնը չունին:

(*) Առաջին հինգ աստիճաններն են. Դոնապանութիւն, Դպրութիւն, Զահրնկալութիւն, Երզնկեցուցութիւն, Սարկաւագութիւն.

9. Եկեղեցիին պատօնեաները քանի՞ աստիճան են: — Ի՞նչ է անոնց անունը: — Առաջին հինգ աստիճան ունեցողը ի՞նչ կը կոչուի եւ ի՞նչ պատօն ունի: — Վեցերորդ աստիճանն ունեցողը ի՞նչ կը կոչուի եւ ի՞նչ պատօններ ունի: — Ո՞վ է առաջին Սարկաւագը: — 10. Ի՞նչ է սարկաւագուիին պատօնը: — Ո՞ր եկեղեցիներ հիմա սարկաւագուիի (մայրսպէս) ունին:

ԳԱՍ. 5. — ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՇՏՕՆՆԵՐԸ (Շար.)

11. Քահանայութիւն. — Սարկաւագութենէ վեր աստիճանն է Քահանայութիւն: Քահանան, իբրեւ ամէնուն հայր ու խնամող, ամուսնացած պաշտօնեայ մ'է. իր մաքուր բարոյականով ու զիտութեամբ իր հօտը կը կառավարէ: Զեռնադրութեան խորհուրդէն զատ, եկեղեցիին բոլոր խորհուրդները կը մատակարարէ. ժողովուրդը կը խնամէ, և կը ծառայէ Աստուծոյ ու Ս. Եկեղեցիին: Քահանան ընդհանուր ժողովրդին կողմէ կ'ընտրուի և Եպիսկոպոսը զայն կը ձեռնադրէ՝ օծելով:

Ս. Դեռնդեանք բառին կատարեալ նշանակութեամբ Քահանայ էին:

12. Վարդապետութիւն. — Վարդապետութիւնը մասնաւոր աստիճան մը չունի, այլ կուտակրծն՝ այսինքն ամուրի Քահանայ է. Եպիսկոպոսներուն նման վեղար կը դնէ իբրեւ նշան կրօնաւորութեան և կը կոչուի Արևշայ: Երբ ձեռնադրող Եպիսկոպոսը գաւազանի իշխանութիւն տայ, ա՛լ այնուհետեւ արտօնուած է եկեղեցիին ատեանը քարոզել Աստուծոյ խօսքը, և Վարդապէս է: Մասնաւոր աստիճան մ'ալ Եպիսկոպոսը կուտայ արժանաւորներուն որոնք կը կոչուին Ծայրագոյն Վարդապետ:

Ս. Մեարոպ Ծայրագոյն վարդապետ մ'էր:

13. Եպիսկոպոսութիւն. — Աստիճաններուն ամենէն բարձրն է Եպիսկոպոսութիւնը, վասնզի եկեղեցական թէ՛ փոքր և թէ՛ մեծ կարգերն Եպիսկոպոսը կուտայ. կը ձեռնադրուի Կաթողիկոսէն. պետ ու հսկող է եկեղեցին, հոգեւոր հայր Քրիստոսի հօտին ու Քարողիչ առաքելական վարդապետութեանց: Բարձրաստիճան Եպիսկոպոսներ մասնաւոր պիտողոսով կը կոչուին Արհի-Եպիսկոպոս կամ Արք-Եպիսկոպոս Կաթողիկոսէն զըրկուած օրհնութեան կոնդակով մը:

1. Ի՞նչ է Քահանայութիւնը (Չ. ասիճան) եւ ի՞նչ է Քահանային պաշտօնը: — 12. Ամուրի Քահանան ի՞նչ կը կոչուի: — Ի՞նչ է անոր պաշտօնը: — Ի՞նչ է գաւազանի իշխանութիւնը: — Ի՞նչ բնէ կ'Ծայրագոյն վարդապետ: — 13. Եօթերորդ ասիճանը ի՞նչ կը կոչուի: — Ի՞նչ է Եպիսկոպոսին պաշտօնը: — Ո՞վ կը ձեռնադրէ զայն: — Որո՞նք Եպիսկոպոս կ'ըսուին:

6. ԴԱՍ. — ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՏՈՄՈՐԸ

14. Հեղեղիկոն. — Քաղկեդոնի ժողովէն 40 տարի ետք, Յունաց Չինոս Կայսրին հանած միաւորութեան թուղթը, Հեղեղիկոն, Հայոց Բարգէն Կաթողիկոսին ձեռքը հանելով՝ Վրաց ու Աղուանից կաթողիկոսներուն հետ Վաղարշապատի մէջ ժողով մը գումարեց 49)ին և զայն ընդունեց:

15. Ներսէս Բ. Աշտարակեցի. — Զ. դարուն սկիզբը Ներսէս Բ. Աշտարակեցին՝ Դուին ժողով ըրաւ. 527ին ուր որոշուեցաւ «Ս. Աստուածը» որ խաչեցարով երգել:

16. Հայց. եկեղեցիին անկախութիւնը. — Հայց. եկեղեցին միւս քոյր եկեղեցիներէ բաժնուեցաւ և առանձին եկեղեցի մը կազմեց Մովսէս Կաթողիկոսին կամ

իր Տեղապահ Վրթանէսի ատեն: Ասոր օրով, Մուշեղ Պոլիս երթալով՝ Մօրիկ Կայսրին հետ կրօնական խնդիրներու վրայ տեսակցեցաւ:

17. Հայոց Տումար. — Հայոց հին Տումարը արեւակնային էր՝ 12 երեսնօրեայ ամիսներով ու հինգ արեւեաց օրերով՝ եզրիպատկանին ու պարսկականին պէս: Այդ 12 ամիսներն էին. Նաւասարդ, Հոռի, Սահմի, Տրէ, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգ, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից ու Աւելեաց:

Քրիստոսի 552 թուին, Հայոց համար Նոր տոմարական ուղղութեամբ թուական մը սկսաւ, զատկական Հինգ հարիւրեակի հաստատութեամբ: Եւ որովհետեւ, 574ին, Մովսէս Եղիվարդեցի Կաթողիկոսն եղաւ այդ տոմարական հաշիւը գործադրողը՝ Մովսէսի անունով կոչուած է նորոգութիւնն ալ, թուականն ալ:

Հայոց այդ տոմարական թուականը 551 տարուան սարբերութիւնն ունի Քրիստոսի թուականէն, այնպէս որ Քրիստոսի սրիւնէ մէկ թուականը զանելու համար, պէտք է զեղչել անկէ 551 թիւը:

Մեր հին Ամանորը կամ Նաւասարդ տոմարը կը կոչուէր Գաղիպի Օգոստոս 11ին:



14. Ի՞նչ է Հեղեղիկոնը: — Ո՞ր Կարողիկոսի օրով ընդունուեցաւ: — 15. Ի՞նչ բնաւ Ներսէս Բ. Աշտարակեցի Կարողիկոսը: — 16. Հայ եկեղեցին ի՞նչ անկախ հռչակուեցաւ: — Մուշեղ ինչպէս զմայ Մօրիկ Կայսրին: — 17. Հայերը ե՞ն առաջ ի՞նչպէս կը հաշուէին տարին ու ամիսները: — Որո՞նք են ամիսներու հին անունները: — Մովսէս Եղիվարդեցի Կարողիկոսը ի՞նչ փոփոխութիւն մտցուց տոմարին մէջ: — Եղիվարդեան բուականը ի՞նչ տարբերութիւն ունի Քրիստոսի բուականէն: — Նաւասարդ ամսու առաջին օրը հիմնականն ո՞ր ամսուն ո՞ր օրուան կը հանդիպի:

7. ԳԱՍ. — ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՏՈՄԱՐԸ (Շար.)

18. Հայ Տոմարի երկրորդ նորոգութիւնը. — Մովսէս Կաթողիկոսի տոմարական նորոգութիւնէն հինգ հարիւրամեակ մը, այսինքն 552 տարի ետք, 1084ին Յովհաննէս Վարդապետ Սարկաւազ երկրորդ նորոգութիւն մը կ'ընէ հայ տոմարին և կ'ընդունի Նահանջի դրութիւնը, այսինքն չորս տարին անգամ մը, փոխանակ հինգի, վեց անգամ օրեր կը հաշուէ: Այս դրութիւնը կը կոչուի ասրկաւարգադիւր տունար:

Երրորդ նորոգութիւն մ' ալ եղած է 1616ին Սարկաւազադիւր տոմարէն 532 տարի ետք, Ջուղայի մէջ Բայր ընդհանրացած է: Այդ թուականը կոչուեցաւ Ազարիայի քուական:

19. Քրիստոսի բուական. — Քրիստոսնայ ազգերու ընդունած միջազգային թուականն է Քրիստոսի թուականը: Այդ թուականին առաջին տարին կը համարուէր Քրիստոսի ծննդեան տարին որ Հռոմի հաստատութեան 754րդ տարին է:

20. Կրկին Կաթողիկոսներ. — Յոյներուն ու Հայերուն մէջ կրօնական հակառակութեան հետեւութիւնն ան եղաւ որ Մօրիկ Կայսրը իրեն հպատակ Հայոց վրայ Յովհաննէս անունով Քաղկեդոնեան Եպիսկոպոս մը Կաթողիկոս դրաւ 580—590: Իսկ Պարսից հպատակ Հայոց վրայ Մովսէս մնաց Կաթողիկոս: Առաջինին աթոռն էր Աւան, իսկ վերջինին գլխաւոր աթոռն էր Դուին: Այսպէս, Զ. դարուն վերջերը, երկու Կաթողիկոսութիւն կար: Այս կրկնութիւնը շատ երկար շտեմեց, Յովհաննէսի մեռնելովը լմեցաւ (գրեթէ 661ին):

18. Հայ տոմարի երկրորդ նորոգութիւնը ե՞րբ և ո՞րն է կողմ եղաւ: — Ի՞նչպէս կը հասունուի: — Երրորդ նորոգութիւնը ե՞րբ եղաւ և ո՞ր: Ի՞նչ կը կոչուի: 19. Քրիստոսնայ ազգեր հիմա ի՞նչ բուական կը գործածեն: — Քրիստոսի ծնած տարին Հռոմի հաստատութեան 754ին արիւն կը գուզողիս: — 20. Հայերուն և Յոյներուն կրօնական հակառակութեան հետեւանքն ի՞նչ եղաւ: — Ո՞ր նսաւ Քաղկեդոնեան Յովհաննէս Կաթողիկոսը: — Պարսիկներու հպատակ Հայերուն Կաթողիկոսը ո՞վ եր այն ատեն և ո՞ր եր անոր արձար: Ե՞րբ վերջացաւ Կաթողիկոսութեան երկուսութիւնը և ի՞նչ կերպով: — Ո՞ր է հիմա Հայերուն ընդհանրական Կաթողիկոսը: — Իսկ մասնաւոր Կաթողիկոսներ ուր են:

8. ԳԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ Զ. ԱՄՍՈՒԱՆ

Սկեղեցիներ. — Քրիստոսնայութիւնը երեք եկեղեցիի բաժնուած է՝ Արեւելեան, Արեւմտեան և Բողոքական:

Արեւելեանը, որ հաստատուած է Առաքեալներուն ձեռքով, ապա տարածուեցաւ Հայերուն մէջ, Յունաստան, Եգիպտոս, ևն:

Հայոց եկեղեցին անդրանիկն եղաւ և հաստատուեցաւ Թաղէոս ու Բարթողիմէոս առաքեալներու ձեռքով (Գ. Պրակ, էջ 16—17, Դաս 5—6):

Արեւմտեան եկեղեցին հիմնուեցաւ Հռոմի մէջ և տարածուեցաւ Եւրոպա և Ափրիկէ. — կ'ըսուի նաև Պապական կամ Հռոմէական եկեղեցի:

Բողոքական եկեղեցին հաստատուած է Լուտեր որ մերթեյ խորհուրդներէն և ծեսերէն շտաբը:

Տիեզերական ժողովներն են Նիկիոյ, Կ. Պոլսոյ և Եփեսոսի ժողովները զորոնք կ'ընդունի մեր եկեղեցին, բայց միւսները չ'ընդունիր:

Ս. Ղեւոնդեաններն ու Ս. Վարդանեանները պաշտպանեցին քրիստոնէական հաւատքը և նահատակուեցան: Ասոնց յիշատակը կը տօնենք մասնաւոր օրեր:

Յկեղեցիին եօրը պաշտօններն ու աստիճաններն են Դոնապանութիւն, Դպրութիւն, Զահրնկալութիւն, Երդմնեցուցութիւն, Կիսասարկաւազութիւն, Սարկաւազութիւն և Քահանայութիւն:

Հենոսիկոնը եկեղեցական միութեան թուղթ մ'է զոր Բարզէն Կաթողիկոսի օրով ընդունեց մեր եկեղեցին, Վաղարշապատի ժողովին մէջ (491), Ներսէս Բ. Սշտարակեցի Կաթողիկոսն ալ 527 թուականին ժողով գումարեց Դուինի մէջ:

Հայ եկեղեցին անկախ հռչակուեցաւ Մովսէս կաթողիկոսի օրով և Հայերուն համար 552ին հաստատուեցաւ Նոր տոմարական թուական: Այս թուականը 1084ին և 1616ին ալ ուրիշ բարեփոխումներ կրեց:

Քրիստոսի բուականը այժմ բոլոր ազգերէն ընդունուած է և կը հաշուուի Քրիստոսի ծնունդէն:

Կռկին Կարաղիկոսներ ունեցան Հայերը Մօրիկ Յոյն Կայսրին օրով. Աւանի մէջ կար աթոռ մը ուր կը նըստէր Յովհաննէս Եպիսկոպոսը և Դուինի մէջ ալ Մովսէս Կաթողիկոսը: 661ին վերջացաւ Յայս երկուութիւնը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. ԴԱՍ. — ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԳԻԱ

(Մով, ծոց, քերակղզի, կղզի)

1. Ծովեր. — Եւրոպական Թուրքիոյ ծովերն են. Սեւ ծով, Մարմարա, Արքիպելագոս, Յոնիական ծով, Ադրիական ծով:

Սեւ ծովը Մարմարայի կը միանայ Վոսիորի Նեղուցով (Գ. Պրակ, էջ 23—25, Դաս 5—6), և Մարմարան Արքիպելագոսի հետ կը հաղորդակցի Տարտանէլի (Չանագ-գալէ) Նեղուցով:

2. Ծոցեր եւ քերակղզիներ. — Արքիպելագոսի եզերքն են Սարոսի խորշը, Աթոսի ծոցը, Սելանիկի ծոցը, Աթոսի կամ Այնորդի թերակղզին, Կէլլպօլուի թերակղզին:

Սեւ ծովու եզերքն է Եէմինէ հրուանդանը:

3. Կղզիներ. — Եւրոպական Թուրքիոյ ծովեզերքին մօտ կան շատ մը կղզիներ, որոնք ցամաքի լեռներուն դէպ ի ծով շարունակութիւնն են:

Արքիպելագոսի մէջ են Թասոս, Սամոթրակէ, Իմպրոս, Լեմնոս, Եւն:

Միջերկրականի մէջ՝ Կրեաէ կամ Կիրիա:

1. Որո՞նք են Եւրոպական Թուրքիոյ ծովերը: 2. Ծոցեր եւ քերակղզիները: 3. Որո՞նք են կղզիներ եւ ո՞ր ծովերու մէջ կը գտնուին:

2. ԴԱՍ. — ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԳԻԱ

(Լեռ, հովիտ, դաշտ, գետ, լիւն)

4. Լեռներ. — Եւրոպական Թուրքիա ունի երկու գլխաւոր լեռնաշղթայ. Տինարեան կամ Ադրիական և Պալքանեան:

Ադրբայկան ճիւղին լեռներն են Պոսնայի և Ալպա-
նիայի լեռները: Աս վերջինին գլխաւոր գագաթնն է
Չարտալ:

Պալքանեան լեռնաշղթայի ճիւղերն են. Արեւելեան
հիւսիսային Պալքան և Արեւմտեան հարաւային Պալ-
քան: Աս վերջինին լեռներն են Հոստոսի կամ Տեսքոթ-
տալ, Աթոս, Սթրանճա:

Չարտալէն դէպի Հարաւ կ'երկննան Մեծօլօ, Կի-
մարեան և Ուլիմպոս լեռները:

5. Հովիսներ եւ դաշտեր. — Հէրսէքի հովիտը և՛ Պոս-
նայի, Գոսովայի, Մարիճայի և Գրզանլըզի դաշտերը:

6. Գետեր. — Եւրոպական Թուրքիա երկու աւա-
զանի կը բաժնուի. Արքիպեղագոսի և Յոնիական-Ադ-
րիականի:

Արքիպեղագոսի աւազանին մեծ գետն է Մարիճա
որ ունի Թունճա և Արտա ճիւղերը: — Սթրումա և
Վարտար գետերը:

Յոնիական-Ադրիական աւազանին մէջ են Տրին և
Գալամոս գետերը:

7. Լիներ. — Շքոտրայի լիճը, Եանեայի լիճը, Օխ-
րիտայի լիճը, Բրէզպայի լիճը և Գաստորիայի լիճը:

4. Ոռ՞նք են Եւրոպական Թուրքիայ լեռներ: 5. Իսկ հովիսներ՞
ըր, 6. Գետեր՞ը: 7. Լիներ՞ը:

3. ԳԱՍ. — ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ

(Կլիմայ եւ բերք)

8. Կլիմայ. — Եւրոպական Թուրքիա ունի բարե-
խառն կլիմայ: Բայց Չմեւը ցուրտ է: Առատ ձիւն կը
տեղայ և երկար ատեն կը մնայ: Ծովեզերեայ կողմերն
ալ անձրեւը շատ է:

9. Բերք. — Եւրոպական Թուրքիա բարեբեր եր-
կիր է. կ'արտադրէ արմտիք կամ հացարոյսեր (ցորեն,
գարի, եգիպտացորեն, որիզ, վարսակ, հաճար, գետ-
նայինձոր): Նաեւ բամպակ, կանեփ, ծխախոտ, ձէթ,
ձիթապտուղ, կնճիթ, վարդի եղ, նարինջ, կիտրոն,
թուղ, բժշկական տունկեր, խէժ, թունասու տունկեր,
աֆիոն, մետաքս, վառելիք և շինութեան փայտեր:

Հանքերն են՝ երկաթ, կապար, քրոմ, սնդիկ, հան-
քածուխ, ալ, շինուածաքար:

Կենդանիներն են՝ ոչխար, այծ, ձի, եղ, էջ:

10. Եւրոպական Թուրքիա ունի բանուկ վաճառա-
կանութիւն և օտար երկիրներէ կ'ընդունի հանքածուխ,
շաքար, խահուէ, գինի, երկաթեղէն, մոմ, եւն:

8. Ի՞նչպէս է Եւրոպական Թուրքիայ կլիման: 9. Ի՞նչ բերքե-
ր ունի: 10. Ի՞նչ կ'ընդունի օտար երկիրերէ:



4. ԳԱՍ. — ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ

(Ծով, ծոց, քերակղզի, կղզի)

11. Ծովեր. — Ասիական Թուրքիայ ծովերն են.
Կարմիր ծով, Սուէզի ջրացք, Սեւ ծով և Պարսից ծոց:

12. Ծոցեր ու քերակղզիներ. — Ասիական Թուրքիա-
յի Արեւմտեան և Հիւսիսային մասը (Միջերկրաբն, Ար-
ֆիպետագոս եւ Մարմարա) ծովեզերքը ծամածուռ է և
կը կազմէ շատ մը մանր ծոցեր ու խորշեր, ինչպէս
Իզմիրի (Չիսուռնիս) ծովածոցը, որուն Հարաւային
կողմն է Չէշմէի թերակղզին (Կրպովեկ) և Գարապրուն
հրուանդանը, նոյնպէս՝ Սքալանտլայի, Մանդալիայի և
Քիտսի ծոցերը:


Միջերկրականի եզերքը՝ Ատալիայի ծոցը, և Իսկէն-
տէրունի կամ Իսոսի ծոցը:

Սեւ ծովու եզերքը՝ Սամանի խորշը, Իւնիէի և Գա-
րապրունի հրուանդանները :

Մարմարայի եզերքը՝ Նիկոմիդիոյ կամ Իզմիտի ծոցը,
և Կիլիքոնի (Գարու սաղի) թերակղզին :

13. Կղզիներ. — Ասիական Թուրքիոյ կղզիները,
Արքիպագագոսի մէջ, կը կազմեն Ճէզարիւր-Պահրը-Սէ-
ֆիտի կուսակալութիւնը (Զ. Պրակ, էջ 24, Դաս 7),
և ասոնք են՝ Հոռոս, Միտիլի, Սաքքը, Լիմնոս,
Իմպրոս, Թենետոս (Պօհնա-Ասաղ), ևւն :

11. Որո՞նք են Ասիական Թուրքիոյ ծովերը. 12. Յոցե՞րը. 13.
Կղզիները :



5. ԴԱՍ. — ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ

(Լեռ, հովիտ, գետ, լիճ)

14. Լեռներ. — Ասիական Թուրքիոյ լեռներուն ա-
մենէն նշանաւորն է Ալլի-տաղ (Մալիս կամ Արարուս)
որ յիշուած է Ս. Գրքի մէջ : Արարատեան լեռնազօտիին
ճիւղերն են. Բիւրակնեան ճիւղը (Սարը-Յիշիք, Տերսիւմ
եւ Գօգար), Գրդական լեռնաշղթան և Գօք լեռնաշղթ-
ան :

Տորոսեան լեռներ որ կը սկսին Ալա-տաղէն և երեք
ճիւղ ունին. 1) Բուն Տօրոս (Պոլլիար-սաղը, Պաքր-սաղ,
Կեսալուր-սաղ, Գօնա-սաղ, Արնա-սաղեւ Բեշիշ-սաղ [Ողիմ-
պոս] Պրուսայի մօտ) : 2) Անթի Տօրոս, և 3) Արեւելեան
Տօրոս (Սիքան-սաղը, Արս-սաղը, Նեմրուս եւ Գրգուռ) :

Լիբանան և Անթի-Լիբանան լեռները :


15. Հովիտներ. — Սեւ ծովու և Տօրոս լեռներու
մէջ, Լիբանան լեռներու մէջ, և Միջագետքի կողմերը
(Եփրատ-Տիգրիսի միջեւ) ընդարձակ հովիտներ կան :

16. Գետեր. — Զիւրիւք-սու (Ճորոխ) Եէշլի-ըրմազ

(Իրիս), Գըզլը-ըրմազ, Սագարիա : Սուսուրլու կամ Մի-
խայրճ և Գօճա-չայ : Պազըր-չայ, Կէտիզ (Քիւշիւք-Մեկ-
սերեզ), Պէօյլեք Մէնտէրէզ, Գարա-սու, Սիհան, Ճի-
հան, Եփրատ և Տիգրիս, որոնք միանալով կը կազմեն
Շաթ-իւլ-Արապ :

17. Լիճներ. — Վանայ ծով, Նազուկ լիճ, Թուզ-
կէօլ և՝ Պուրսուրի, Ագչէհիլի, Պէյշէհիլի լիճերը : Ագ-
տէնիզ, Գայլիկայի ծով, Մեուեալ ծով : Սապանճայի,
Իզնիկի (Նիկիս) և Ապոլոնիոնի լիճերը :

14. Որո՞նք են Ասիական Թուրքիոյ լեռնազօտները, 15. Հո-
վիտները, 16. Գետերը, 17. Լիճերը :



6. ԴԱՍ. — ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ

(Կլիմայ եւ բերք)

18. Կլիմայ. — Ասիական Թուրքիոյ կլիման ամէն
կողմ միեւնոյն բարեխառնութիւնը չունի : Արեւելեան
հիւսիսային կողմերը ձմեռը շատ ցուրտ ու երկարատեւ
է : Դէպի Հարաւարեւմուտք՝ աւելի մեղմ է և ձմեռը
կարճատեւ : Հարաւային կողմը տաք ու վատառողջ :

19. Բերքեր. — Ասիական Թուրքիոյ բնական ար-
տադրութիւններն են. արմտիք, խաղող, նարինջ, եղ-
ջերենի, թուզ, նուշ, պտուղներ, ձէթ, ծխախոտ, ա-
փիոն, բամպակ, բուրդ, կանեփ, տորոն, ալաթահրի,
չուշմա, սխտոր, ատաղձ, ձուկ, սպունգ, եւայլն :

Ունի հարուստ հանքեր որոնցմէ ոմանք կը շահա-
գործուին, և կրնան արտադրել ածխահանք, պղինձ,
կապար, երկաթ, արծաթ, ծովափրփուր, քրոմ, դա-
ռիկ, զմռնիտ (զնիսարե) քարիւղ, մետաքս, աղ, մար-
մարիոն, եւայլն :

Անասնաբուծութիւնը զարգացած է. ծանօթ են Գա-
րամանի ոչխարը և էնկիւրիւի այծը: Տեղ տեղ շատ հող-
կը տարուի շերամապահութեան որ շահարեք արուեստ է:

Ասիական Թուրքիոյ ծովերն ու լիճերը կուտան ա-
ռատ ձուկ, (անձրուկ, աղկեր, թիւնիկ, թիւնոս, թը-
րածուկ, վահանածուկ, տարեխ, օձածուկ):

20. Ասիական Թուրքիա կը ներմուծուին Եւրոպայէն
ամէն տեսակ առեւտրական նիւթեր:

18. Ի՞նչպէս է Ասիական Թուրքիոյ կլիման. 19. Ի՞նչ բերե-
ռնի: Անասնաբուծութիւնն ու շերամաբուծութիւնն ի՞նչպէս են:
Ի՞նչ ձուկեր կ'արտադրէ: 20. Եւրոպայէն ի՞նչ նիւթեր կը ստանայ:

7. ԳԱՍ. — ԳԵՂԸ ԿԱՄ ՔԱՂԱՔԸ

(Տեղագրութեան վրայ հարցումներ):

1. Ձեր գեղին կամ քաղաքին ո՞ր կողմը կ'իջնայ
Կառավարութեան յատուկ շէնքը:

2. Ո՞ր պաշտօնատարները կան հոն: (Գայլնագաւ,
Հախիւ, Միւրֆի, Դատական պաշտօնեաներ, Պեղեկյեի
ժողով, ևւն:)

3. Քանի՞ թաղ կայ ձեր բնակած քաղաքին մէջ,
գրեցէք անունները, և ձեր գծած քարտէսին վրայ ա-
նոնց զիւրքը նշանակեցէք:

4. Ուրիշ ի՞նչ բաներ կան յիշելու արժանի, ի՞նչ
բերքեր կ'ելլէ, ի՞նչ արհեստաւորներ կան, ևւն:

Հրահանգ (*)

Գէտերուն տեղ պէտք եղած բառերը զննելով՝ ամբողջացուցէք հետեւ-
եալ խօսքերը:

1. Ասիական Թուրքիոյ գլխաւոր քաղաքներն են (Ըսկ'ֆ

(*) Այս և յաջորդ հրահանգները կը զննէք իբր նմոյշ. Ուսուցիչները
կրնան նոյն ուղղութեամբ ուրիշ հրահանգներ ալ պատրաստել:

գո՛նէ 10 քաղաքի սնուն): — 2. Էնկիւրիի այժը կ'արտադրէ ընկիւր...
որ առուստրի գլխաւոր նիւթ մ'է: — 3. Ասիական Թուրքիոյ մէջ ա-
մենէն բարձր լեռն է և ամենէն մեծ գետն է որ կը բափի
.... ծոցը: — 4. Շաքիւ-Արապ գետը կը կազմուի երկու նիւթերէ,
.... և ... որոնք կը բոխին և իրենց ընթացքին մէջ կը բռնեն
նետեւեալ քաղաքներն ու երկիրները (գոնէ 4—5 սնուն): —
5. Օսմանեան երկիրներու վարչական բաժանումները հետեւեալ ա-
նուններն ունին ...: — 6. Ճէզայիրի-պահիր-Ալեքիսը (Միջերկրականի
կղզիները) կը կազմեն վիլայէթ մը որ ունի... սանճագ,, ..
....,: — 7. Բաղէ, Սղեղ, Մուս և Կիլիկ գաւառները (սան-
ճագ) ի կուսակալութեան (վիլայէթ) մէջ են:

8. ԳԱՍ. — ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ

1. Աշխարհագրական քարտէսին վրայ նշանակեցէք
Եւրոպական և Ասիական Թուրքիոյ գլխաւոր լեռնաշղ-
թաները, գետերը, լիճերը, ծովերը, ծոցերը, կղզիները:

2. Դէ՞մ առ դէ՞մ գրեցէք Եւրոպական և Ասիական
Թուրքիոյ բերքերը, և ըսէ՛ք թէ ի՞նչ բանի կը գործած-
ուին անոնք:

3. Գրեցէք թէ ի՞նչ նիւթեր կը ներածուին (այս-
ինքն օտար երկիրներէ կը բերուին) Տաճկաստան:

4. Նշանակեցէք գլխաւոր նաւահանութիւնները:

Հրահանգ

Խօսքերն ամբողջացուցէք՝ կէտերուն տեղ զննելով պէտք եղած բա-
ռերը:

- 1. Մեր բնակած երկրագունքին չորս լիւղներ կը կոչուին...
...,,,
- 2. կ'ըսուի այն կապաչ գիծը որ
երկինքը երկրին կը կցէ: — 3. Գիւտը. երկինքին վրայ կը տեսնենք
փայլուն կէտեր որոնք կը կոչուին: — 4. կը կոչուի այն
գիծը որ երկրին մակերեսը երկու հաւասար մասի կը բաժնէ: — 5.
Կ. Պոլիս ունի քաղ, (Գրեցէ՛ք քաղերուն սնունները): —
6. Վոսպոռի Ասիական եզերքի գեղերն են, իսկ Եւրոպական ե-
զերքի գեղերն են
- 7. Պոլսոյ հին յիւսակարաններն են ...:
— 8. Պոլսոյ բնակիչներն են.... (Գրեցէ՛ք ազգերուն սնունները): —
9. Տանկաստանի մէջ կը խօսուին հետեւեալ լեզուները
- 10. Պոլսոյ մէջ յիւսակեղի են, իբրև առուստրի կեղտն, քաղերը:

Թ Ո Ւ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

1. ԳՍՍ. — ԲՍԺՍՆՈՒՄ (Շար.)

1. Սրբ Բանորդին քուանշանը մեծ ելլէ. — 2968ը բաժնենք 78ով: 7ը եթէ 29ի մէջ փնտռենք, կը տեսնենք որ 4 անգամ կայ, բայց 4 անգամ 78ը 2968|78 նենք որ 4 անգամ կայ, բայց 4 անգամ 78ը 234|38 կ'ընէ 312 որ 298 Ա. Մասնական բաժանելիէն աւելի մեծ է. ուրեմն 4ի տեղ 3 կը գրենք քանորդը և գործողութիւնը կը շարունակենք:

Ըսել է թէ, երբ Բանորդին մեկ քուանշանը մեծ ըլլայ, արտարեալը մասնական բաժանելիէն չ'երբեր եւ այն ատեն 1 թիւ պակսեցնելու է Բանորդին:

1. — Ի՞նչպէս կը գիտնանք թէ Բանորդին քուանշանը մեծ է:

Վարժուքիւններ. **1-5.** Բաժնէնք 323796ը 132ով, 113894ը 341ով, 2634173ը 624ով, 2941212ը 525ով, 54238954ը 87968ով:

2. ԳՍՍ. — ԲՍԺՍՆՈՒՄ (Շար.)

2. Բաժնելու ամենապարզ կերպը. — 1. Աւելի արագ և աւելի պարզ կ'ըլլայ բաժանումը, եթէ մէկ կողմէ գտնուած քանորդով բազմապատկենք բաժանարարը և արտադրեալը միշտ հաննք մասնական բաժանելիէն:

2. Այսպէս. 2968ը 78ով բաժնած ատեննիս, կ'ըսենք 7ը 29ին մէջ կայ 3 անգամ. 3 անգամ 8՝ 24. 24ը 26էն՝ 2. այս 2ը կը գրենք 6ին տակ. ձեռք կայ 2 (որովհետեւ 26էն հանեցինք). 3 անգամ 7ը՝ 21, 2 ալ ձեռք կայ 23. 23ը 29էն ելլէ, կը մնայ 6, 6ը կը գրենք, և յետոյ այս 62 առաջին մնա-

ցորդին քով կ'իջեցնենք բաժանելիի 8 թուանշանը. և կ'ըսենք 7ը 62ին մէջ կայ 8 անգամ. 8 անգամ 8՝ 64. 64ը 68էն ելլէ, կը մնայ 4. ձեռք՝ 6 (որովհետեւ 68էն հանեցինք). 8 անգամ 7ը 56. 6 ալ ձեռք՝ 62. 62ը 62էն 0: Ուրեմն 38 քանորդ և 4 մնացորդ:

2. — 1. Բաժնելու ամենէն արագ ձեւը ո՞րն է: 2. Նայն լկեր պով բաժնեցէք 2968 թիւը 78ով:

Վարժուքիւններ. — **6-10.** Նախորդ դասի բաժանուցներն ըրէք, արագ ու պարզ գործողութիւնով:

3. ԳՍՍ. — ԲՍԺՍՆՈՒՄ (Շար.)

3. Թէ ե՞րբ պէտք է Բանորդին մէջ 0 դնել. — 1. Բաժնենք 12873ը 42ով: Կը տեսնենք որ Բ. Մասնական բաժանելին 27ը աւելի փոքր է 42էն. այսինքն 42ը 27ին մէջ չ'կայ. ահա այն ատեն այդ յիստի տեղը, քանորդին մէջ կը դնենք 0 և բաժանելիին մընս թիւը վար առնելով՝ գործողութիւնը կը շարունակենք:

2. Ուրեմն երբ մասնական բաժանելի մը բաժանարարէն աւելի փոքր ըլլայ, քան որի մէջ 0 կը դնենք եւ բաժանելիին մընս թիւը վար առնելով՝ գործողութիւնը կը շարունակենք:

3. — 1. Ի՞նչպէս կը բաժնուի 12873ը 42ով: 2. Երբ մասնական բաժանելին բաժանարարէն պզտիկ է, ի՞նչ կ'ընենք:

Վարժուքիւններ. — **11-18.** Բաժնէլ 562536ը 936ով, 457689ը 653ով, 2007885ը 3999ով, 3896423ը 379ով, 9181429ը 274ով, 56054763ը 69872ով, 253697ը 417ով, 68236542ը 9876ով:

4. ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

4. Բաժանումին փորձը. — Բաժանումին փորձն ընելու համար պէտք է քանորդով բազմապատկել բաժանարարը. եթէ մնացորդ ալ կայ, այս արտադրեալին վրայ գումարել. այն ատեն կ'ելլէ բաժանելին և գործողութիւնը ուղիւ է:

Բաժանում	Փորձ
312.69 428	428 Բաժանարար
13 09 73	73 Քանորդ
0 25	-----
	1284
	2996

	31244
	25 Մնացորդ

	31269 Բաժանելի

4. — Բաժանումին փորձը ի՞նչպէս կ'ընենք:

Վարժուքիւններ. — 19-31. Նախորդ 28 էջի 1-5 վարժուծեան հինգ բաժանումներու փորձերն ըրէք, յետոյ նախորդ դասի 11-18 եօթը բաժանումներու փորձերը:

5. ԴԱՍ. — ԲԱԺԱՆՈՒՄ (Շար.)

5. Մտաւոր բաժանում. — 1. Բաժանում 2ով. — Թիւ մը 2ով բաժնել, կը նշանակէ այն թիւին կէսը գտնել: Օրինակ. Կ'ուզենք 40ի կէսը գտնել. յայտնի է որ 40ը կ'արժէ 4 հատ 10. 4 հատ տասնին կէսը կ'ընէ 2 տասը 20: Կ'ուզենք 88ին կէսը գտնել: 88 հաւասար է 80ի և կամ 8ի: 80ին կէսն է 40. 8ին կէսն է 4. ուրեմն 88ին կէսն է 40 առաւել 4 կամ 44:

2. Բաժանում 3ով. — Թիւ մը 3ով բաժնել, կը նշանակէ այն թիւին երրորդ մասը գտնել: Այսպէս, եթէ ուզենք 69ին երրորդ մասը գտնել, այսինքն 69ը 3ով

բաժնել, նախ կը ղիտենք որ 69ը հաւասար է 60+9ի. 60ը 6 հատ 10՝ ունի. 6 հատ 10 երրորդ մասն է 2 հատ 10 կամ 20ի, 9ի երրորդ մասն է 3. ուրեմն 20+3=23. այս 23ը 69ին երրորդ մասն է:

3. Բաժանում 10ով. — Թիւ մը 10ով բաժնելու համար, հերիք է որ անոր աջ կողմի մէկ թուանշանը զատենք: Այս զատուած թուանշանը մնացորդն է: Այսպէս 485ձը 10ով բաժնելու համար, կը գրենք 485 քանորդ 2 մնացորդ:

4. Բաժանում 4ով. — Թիւ մը 4ով բաժնելու համար, նախ այն թիւին կէսը կը գտնենք, յետոյ ելածին ալ կէսը կը գտնենք:

5. — 1. Թիւ մը 2ով բաժնելը ի՞նչպէս կ'ըլլայ: — 2. Իսկ 3ով: — 3. Իսկ 10ով: — 4. Իսկ 4ով:

Վարժուքիւններ. — 32-41. — Առանց գործողութիւն ընելու, սա Թիւերը 2ով բաժնեցէք և քանորդները գտէք. 128. 224. 48. 146. 328. 66. 444. 4100. 6200. 8800. — 42-51. Առանց գերծողութիւն ընելու հետեւեալ Թիւերը 3ով բաժնեցէք կամ անոնց երրորդ մասը գտէք, քանորդը գրելով. 33. 96. 210. 2100. 63. 630. 600. 6000. 660. 6600. — 52-61. Հետեւեալ Թիւերը 10ով բաժնեցէք և քանորդն ու մնացորդը գրեցէք առանց գործողութիւն ընելու. 53. 524. 48. 487. 6328. 7350. 7356. 45200. 45270. 45274. — 62-73. Թիւերը 4ով բաժնեցէք և քանորդը գրեցէք առանց գործողութիւն կատարելու. 48. 480. 4800. 36. 368. 32. 320. 324. 28. 280. 284. 288. — 74. Երկու կտոր կերպաս գնեցինք, երկուքն ալ միեւնոյն տեսակէն, միեւնոյն արժէքով. առաջին կտորը կ'արժէ 108 զրուշ. երկրորդը 90. այդ երկրորդը առաջինէն 3 մեծր պակաս է. ուրեմն գտէք թէ առաջինը քանի և երկրորդը քանի մեծր երկար է. — 75. Տուն մը շինելու համար պէտք եղան 1500 աղիւս. 1000ը 85 զրուշէն և 4000 կլմիւնտր 1000ը 215 զրուշէն քանի զրուշ պիտի վճարեմ աղիւսին և կլմիւնտրին համար: — 76. Կալուածատէր մը գնեց արտ մը, տուն մը և պարտէզ մը, արտին գինն էր 2510 զրուշ. տան գինը անկէ 6450 զրուշ աւելի, իսկ պարտէզին գինը արտէն 250 զրուշ պակաս. գտէք տանը և պարտէզին գինը:

6. ԳԱՍ. — ՏԱՍԵՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ՍԱՀՄԱՆԸ

6. Տասնորդ, հարիւրորդ, հազարորդ. — 1. Եթէ ուզենք խնձոր մը տասը տղաքներու մէջ բաժնել հաւասար կերպով, ամէն մէկ տղուն բաժին կ'իջնայ խնձորին տասը մասէն մէկը կամ մէկ սասնորդը:

2. Եթէ ամէն մէկ տղայ իր առած բաժինը 10 հաւասար մասերու բաժնէ, ըսել է թէ ամբողջ խնձորը 10 անգամ 10 կամ 100 հաւասար մասերու բաժնուած կ'ըլլայ, և այն ատեն այդ 100 մասերէն ամէն մէկը ամբողջ խնձորին մէկ հարիւրորդը կ'ըլլայ:

Այս կերպով դեռ կրնանք զանեւ հազարորդը:

7. Միութիւնը տասնորդական մասեր ունի. — Տասնորդը, հարիւրորդը, հազարորդը կը կոչուին միութեան սասնորդական մասերը. որովհետեւ ասոնք միութեանէն փոքր են 10 անգամ, 100 անգամ, 1000 անգամ:

8. Տասնորդական կոտորակներ. — Երբ միութիւն մը տասնորդական ըրած ենք, այս տասնորդականէն քանի հաս որ առնենք, անոնք կը կոչուին սասնորդական կոտորակ. այսպէս 4 տասնորդը, 35 հարիւրորդը տասնորդական կոտորակ են:

9. Տասնորդական թիւեր. — Թիւ մը որ տասնորդական մասեր կը պարունակէ, կը կոչուի սասնորդական թիւ. այսպէս 25 միութիւն և 5 տասնորդ՝ երկուքը մէկտեղ՝ տասնորդական թիւ մը կը կազմեն որ միութեանէն մեծ է. իսկ 15 հարիւրորդը նոյնպէս տասնորդական թիւ մըն է որ միութեանէն փոքր է:

6. — 1. երբ ուզենք առարկայ մը 10 հաւասար մասի բաժնել, այդ մասերուն ամէն մէկն ի՞նչ կ'ըսուի: 2. Առարկայ մը ի՞նչ պէս 100 հաւասար մասերու կը բաժնուի եւ ամէն մէկ մասը ի՞նչ կ'ըսուի: 7. — Միութեան սասնորդական մասը ի՞նչ է: 8. — Ի՞նչ է սասնորդական կոտորակը: 9. — Ի՞նչ է սասնորդական թիւը:

Վարձուքիւններ. — 77. Մարդ մը 3800 դրշ. կը վաստկի տարին, ասոր 534 դրշ.ը բնակարանին վարձը կուտայ. ինչ կը մնայ իրեն՝ ամառական ծախքը ընելու համար. — 78. Ազգասկսական մը քաղաքը տարւաւ և ծախեց 895 դրշ.ի ցորեն, 560 դրշ.ի գարի և 270 դրշ.ի յարդ. այդ ստակով զնեց ձի մը 1180 դրշ.ի, և կով մը 450 դրշ.ի, ստակ մնաց իր բովը 8 է ոչ. և ինչպիսի. — 79. Երեք հոգի իրենց մէջ գումար մը բաժնեցին, այնպէս որ առաջինն առաւ 620 դրշ. երկրորդը 40 դրշ. անկէ պակաս, իսկ երրորդը առաջինին և երկրորդին առաձնելուն կէսին չափս Գտնելու է այս վերջինին բաժինը:

7. ԳԱՍ. — ՏԱՍԵՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐԸ ԱՆՈՒԱՆԵԼ

10. Ի՞նչպէս կը ներկայացնենք տասնորդական թիւ մը. — 1. Մենք արդէն գիտենք թէ ամբողջ թիւի մը մէջ, աջ կողմը դրուած թիւերը միշտ 10 անգամ աւելի պզտիկ են իրենց ձախ կողմը թիւերէն:

2. Այս կանոնը տասնորդական թիւերուն ալ կը յարմարի. այսպէս՝ ամբողջ թիւի մը աջ կողմը միւտարէն յետոյ եկող առաջին թիւը սասնորդ է, երկրորդ թիւը անկէ 10 անգամ փոքր կամ հարիւրորդ է, երրորդ թիւը հազարորդ և այսպէս շարունակ:

3. Բայց թիւի մը մէջ տասնորդականներն ու ամբողջ թիւերը ճանչնալու համար, զանոնք իրարմէ կը զատենք ստորակիսով մը: Այսպէս, 5,7345 թիւին մէջ, 5ը ամբողջ միութիւն կը ցուցնէ, իսկ 7ը տասնորդ, 3ը հարիւրորդ, 4ը հազարորդ և 5ը տասը հազարորդ:

հարիւրորդ մաս
տասնորդ մաս
հարիւր մաս
հազար մաս
միութիւն
5,7345

11. Ամբողջ մաս եւ տասնորդական մաս. — 1. Տասնորդական թիւի մը մէջ, ոտորակէտին ձախ կողմը գտնուած թիւը անբողջ մասն է, աջ կողմ գտնուածը սասնորդական մասն է: Այսպէս 85,24 թիւին մէջ 85ը ամբողջ մասն է, 24ը տասնորդական մասը:

2. Ստորակէտին աջ կողմը գտնուած թիւերը կ'ըսուին սասնորդական թիւեր կամ պարզապէս սասնորդական :

12. Տասնորդական թիւ մը ի՞նչպէս կարդալու է. — Տասնորդական թիւ մը կարդալու համար նախ կը կարդանք ամբողջ թիւը, յետոյ անոր քովի տասնորդականը կը կարդանք ամբողջ թիւի պէս, բայց վերջին տասնորդականը քանի՞երորդ որ է, անոր անունը կուտանք : Այսպէս, 45,54ը կը կարդանք՝ 45 ամբողջ 54 հարիւրորդ . կամ 5,762ը կը կարդանք՝ 5 ամբողջ 762 հազարորդ . կամ 215,6215ը՝ 215 ամբողջ 6215 տասը հազարորդ :

10. — 1. Ամբողջական թիւերու մէջ աչ կողմը դրուած թիւ ի՞նչ կը ցուցնէ : 2. Իսկ սասնորդական թիւի մը մէջ միաւորէն ետքը եկող առաջին թիւ ի՞նչ է : 3. Տասնորդական թիւի մը մէջ ամբողջական թիւերը ի՞նչպէս կ'որոշենք : — **11.** — 1. Ստորակէտին աչ կողմի թիւ ի՞նչ կ'ըսուի : Իսկ ձախ կողմի թիւը : 2. Տասնորդական մասին քուանտանները ի՞նչ կը կոչուին : — **12.** — Տասնորդական թիւ մը պարզալու կանոնը ո՞րն է :

8. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԹԻԻԵՐԸ ԱՆՈՒԱՆԵԼ (Շար.)

13. Ի՞նչպէս գրելու է տասնորդական թիւ մը. — 1. Տասնորդական թիւ մը գրելու համար, ձախ կողմէն նախ գրելու է ամբողջ թիւը, յետոյ դնելու է ստորակէտը, յետոյ գրելու է սասնորդականը :

Այսպէս, երբ կ'ըսուի 38 ամբողջ 425 հազարորդ, կը գրուի 38,425 :

2. Եթէ թիւին անունը տրուած ժամանակ, ամբողջ թիւ չգտնուի, անոր տեղ, ստորակէտէն առաջ գերո մը դնելու է : Այսպէս, եթէ ըսենք 25 հարիւրերորդ, կը

գրուի 0,25. Եթէ ըսենք 2465 տասը հազարորդ, կը գրուի 0,2465 :

3. Պէտք է լաւ ուշադիր ըլլալ որ տասնորդականին վերջին թիւը իր կարգը պահէ. այսպէս, եթէ ըսենք 5 ամբողջ 14 հազարորդ և գրենք 5,14, սխալ է՝ որովհետեւ հոս 14ը հարիւրորդ է. պէտք է գրել 5,014 հազարորդ . կամ՝ երբ ըսենք 15 ամբողջ 6 տասը հազարորդ, պէտք է 6ը իր տեղը գրել, այսինքն 4րդ թուանշան ըլլալու է, այսպէս, 15,0006 :

13. — 1. Ի՞նչպէս կը գրուի տասնորդական թիւ մը : 2. Եթէ ամբողջ թիւ չըլլայ, սեղը ի՞նչ կը գրուի : 3. Տասնորդական թիւ մը գրելու համար ի՞նչ բանի ուշադիր ըլլալու է :

9. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԹԻԻԵՐԸ ԱՆՈՒԱՆԵԼ (Շար.)

14. Տասնորդական թիւի մը աչ կողմը գերոներ աւելցնել կամ ջնջել. — 1. Սա թիւերը 3,25 և 3,250 իրարու հաւասար են, միայն թէ առաջինը 25 հարիւրորդ, իսկ երկրորդը 250 հազարորդ կը կարդանք. կամ 6,37 և 6,37000 միեւնոյն արժէքն ունին, միայն թէ երկրորդը կը կարդացուի 37 հարիւր հազարորդ : Այսպէս, կրնամք սասնորդականի մը աչ կողմը մեր ուզածին չափ գերո աւելցնել, առանց սասնորդականին արժեքը փոխելու :

2. Քանի որ տասնորդականին աջ կողմը գերոներ աւելցնելով՝ անոր արժէքը չի փոխուիր, նոյնպէս անոր աջ կողմէն գերոներ ջնջելով՝ արժէքը չի փոխուիր : Հետեւաբար կրնամք սասնորդականի մը աչ կողմը գրուած գերոները ջնջել, առանց սասնորդականին արժեքը փոխելու :

14. — 1. Ի՞նչ տարբերութիւն ունին 3,25 և 3,250 թիւերը : 2. Տասնորդականի մը աչ կողմը գերոներ աւելցնելով կամ ջնջնել, անոր արժեքը կը փոխուի :

10. ԳԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԹԻԻԵՐԸ ԱՆՈՒԱՆԵԼ (Շար.)

15. Ի՞նչպէս կրնանք տասնորդական մը **1000**, **10000**, **100000**, **է.ն. մեծցնել**. — 1. Եթէ ուզենք 25,43ը 10 անգամ մեծցնել, պէտք է որ ստորակէտը մէկ թիւ դէպի աջ կողմը բերենք, այսպէս 254,3: Ուրեմն կրնանք գրել 25,43×10=254,3. և իրօք, առաջին թիւին մէջ ստորակէտին ձախ կողմը գտնուած 5ը միաւոր է, և կ'արժէ 5 միւթիւն, իսկ երկրորդ թիւին մէջ տասնաւոր է և կ'արժէ 50. նոյնպէս 4ը, որ առաջինին մէջ ստորակէտին ձախ կողմը կը գտնուի, կ'արժէ 4 տասնորդ, իսկ երկրորդին մէջ միաւոր կարգն է և կ'արժէ 4 ամբողջ:

2. Ուրեմն, յայտնի է որ տասնորդական թիւ մը 10ով, 100ով, 1000ով եւն. բազմապատկելու համար, պէտք է ստորակէտը դէպի աջ կողմը տանինք՝ մէկ թիւ, երկու թիւ, երեք թիւ, եւայլն. այսինքն զերօներուն չափ:

3. Եթէ տասնորդական թուանշանները քիչ բլան, անոնց աջ կողմը կրնանք զերօներ աւելցնել. արդէն յայտնի է որ այս զերօները բնաւ անոր արժէքը չեն փոխեր: Այսպէս, եթէ ուզենք 2,5ը 100ով բազմապատկել, նախ կրնանք գրել 2,50 որ հաւասար է 2,5ի. յետոյ ստորակէտը աջ կողմը տանելով երկու թիւ կը գրենք 250:

16. Ի՞նչպէս կրնանք տասնորդական թիւ մը **100**, **1000**, **10000**, **է.ն. փոքրցնել**. — Մեծցնելու համար ստորակէտը դէպի աջ կողմը տարինք, պզտիկցնելու համար դէպի ձախ կը տանինք: Այսպէս, 46,53ը պատն անգամ պզտիկցնելու համար, գրելու է 4,653: Եթէ ձախ կողմը թիւերը պակսին, զերօներ աւելցնելու է: Այսպէս, 3,56ը եթէ 100 անգամ ուզենք փոքրցնել, նախ ստորակէտը երկու թիւ դէպի ձախ տանելու է. բայց

մէկ թիւ կայ, ուրեմն զերօ մ'ալ կ'աւելցնենք. այսպէս, ,0356 կամ 0,0356:

15. — 1. Տասնորդական թիւ մը 10 անգամ ի՞նչպէս կրնանք մեծցնել: 2. Ի՞նչպէս կրնանք մեծցնել 100 անգամ, 1000 անգամ, եւայլն: 3. Երբ մեծցնելիք բուսեանք պէտք եղածին չափ տասնորդականներ չունենայ՝ ստուպէտք առաջացնելու համար՝ ի՞նչ ընելու է: — **16.** — Տասնորդական թիւ մը 10 կամ 100 կամ 1000 անգամ պզտիկցնելուն կերպ որն է:

11. ԳԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

17. Տասնորդական թիւերը գումարել. — Տասնորդական թիւերն ալ անոող թիւերու պէս կը գումարուին:

5,237	45,5	Շատ դիւրին է զանոնք իրարու տակ գրել, միայն՝ ուշադիր ըլլալու է որ ստորակէտներն իրարու տակ գան և յետոյ ամբողջ թիւերու միաւորներն իրարու տակ, և տասնորդական թիւերու տասնաւորներն ալ իրարու տակ: Վերի թիւը կըրնայ վարինէն աւելի շատ տասնորդական ունենալ, կամ պակաս ունենալ, առ նշանակութիւն չունի: Այսպէս գրելէ յետոյ, գումարելու է, միայն թէ երբ ստորակէտին տեղը հասնիք, ստորակէտը իր տեղը դրէք:
3,428	127,38	
6,248	6,412	
14,913	179,292	

17. — Տասնորդական թիւերն ի՞նչպէս գումարելու է:

12. ԳԱՍ. — ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ (Շար.)

18. Փորձ. — Տասնորդական թիւերու մէջ գումարումի փորձը, ամբողջ թիւերու նման է: Փոխանակ

վերէն վար գումարելու, փորձի համար վարէն վեր կը գումարենք, պէտք է որ միեւնոյն գումարն ելլէ:

18. — Տասնորդական քիւերու գումարումին փորձը ի՞նչպէս կ'ըլլայ:

Վարժութիւններ. — 80-90. Գրով գրեցէք սա թիւերը 0,7; 0,14; 1,28; 23,42; 0,07; 0,0007; 45,179; 0 004; ,00015; 0,00008; 4,396; — 91-112. Մտ նախորդ թիւերը նոյն 100 անգամ մեծցուցէք, յետոյ միեւնոյն թիւերը 10 անգամ փոքրցուցէք: — 113-118. Թուանշանով գրեցէք, Վեց ամբողջ բառասունըհինգ հարիւրորդ: Երեսունըվեց ամբողջ եօթանասունըհինգ հարիւրորդ: Հարիւր երեսունըչորս ամբողջ եօթանասունըհինգ հարիւրորդ: Երկու հազար հարիւր բառասուն երկու ամբողջ ինը հարիւր վեց հազարորդ: Երկու ամբողջ ուժը հազարորդ: Վեց տասն հազարորդ, ինը հարիւր հազարորդ: — 119-122. Հետեւեալ գումարներն ըրէք՝ իրենց փորձերովը մէկտեղ. 54,75+321+42+17+0,482+578,2; 3+5,7+243,9+0,057+238,25+0,07,2,0005,7,5+8,56+32,484+0,7005+47,80+17,17; 0,03+0,05+0,4+0,008+0,279+0,009.



13. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ՀԱՆՈՒՄԸ

19. Տասնորդական քիւերն իրարմէ հանել. — Տասնորդական քիւերն իրարմէ հանելու ե ճիշտ անբողջ քիւերու պէս: Ատոր համար, փոքր թիւը մեծին տակ գրելու է, այնպէս որ ստորակէտներն իրարու տակ գան. յետոյ ամբողջ թիւերու պէս հանելու է, տարբերութիւնը գտնելէ յետոյ ստորակէտը ճիշտ իր սիւնակին տակը դնելու է:

19. — Տասնորդական քիւերուն հանումը ի՞նչպէս կ'ընէք:
Վարժութիւններ. — 123-128. Հանեցէք իրարմէ. 2,04ը 7,33էն; 0,35ը 0,63էն; 1,045ը 6,307էն; 2,006ը 4,705էն; 0,0798ը 0,8956էն; 5,273ը 8,002էն:

14. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ՀԱՆՈՒՄԸ (Շար.)

20. Երբ քիւերէն մէկը միւսէն պակաս ճասնորդական ունի. — Կրնայ ըլլալ որ մեծ թիւը փոքրէն կամ փոքր թիւը մեծէն պակաս տասնորդական ունենայ. — այն ստեղծ պակաս ունեցողին աջ կողմը պէտք եղածին չափ զերօ կրնանք աւելցնել: Յայտնի է որ այս զերօները տասնորդական թիւերու արժէքը չեն փոխեր: Այսպէս 46,7էն կ'ուզենք հանել 27,432ը: Մեծ թիւին տասնորդականին աջ կողմը երկու զերօ կ'աւելցնենք և գործողութիւնը կը կատարենք: Կամ 46,732էն հանել 27,4ը: Այս վերջինին աջ կողմը կ'աւելցնենք երկու զերօ:

20. Ի՞նչ ընելու է. երբ քիւերէն մէկը միւսէն պակաս ճասնորդական ունի:

Վարժութիւններ. — 129-137. Իրարմէ հանել. 79,287ը 98,35էն; 0,8007ը 0,938էն; 0,00567ը 0 006էն; 0,999ը 9,9էն; 5,68ը 6,7էն; 5,68ը 6էն; 0,234ը 3էն; 0,428ը 1էն; 0,009ը 0,09էն:



15. ԴԱՍ. — ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ՀԱՆՈՒՄԸ (Շար.)

21. Փորձ. — Հանումի մեջ ալ, սասնորդական քիւերուն փորձը ճիշտ անբողջ քիւերու պէս է: Հերիք է որ փոքր թիւը և տարբերութիւնը իրարու տակ գրէք և գումարէք՝ կ'ելլէ մեծ թիւը:

Փորձ	Հանում	
27,432	Փոքր թիւ	46,700
19,268	Տարբերութիւն	27,432
46,700	Մեծ թիւ	19,268
		Տարբերութիւն

21. — Տասնորդական թիւերու բարձումին փորձը ի՞նչպէս կ'ընէք :

Վարժուքիւններ. — 138—152. Նախորդ երկու դասերու մէջ գտնուած տասնընից հաս հանումներու փորձերն ըրէք :

16. ԳԱՍ. — ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆ ԹԻԻԵՐՈՒ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆԸ

22. Տասնորդական թիւերն իրարու հետ բազմապատկելի. — Ճիշտ ակնբոյ թիւերու պէս իրարու հետ կը բազմապատկենք սասնորդական թիւերն ալ, ստակց usրակիտիև ուշադրութիւն ընելոյ : Բայց արտադրեալը գտնելէ յետոյ, անոր աջ կողմէն զատելու է այնքան տասնորդական, որքան որ գտնուի՝ թէ՛ բազմապատկողին թէ՛ բազմապատկելիին մէջ :

Առաջին օրինակ. — 15,37ը կ'ուզենք 5ով բազմապատկել. կը գրենք այնպէս մը որ 5ը 15 ամբողջին միւտոր 5ին տակը գայ, յետոյ կը բազմապատկենք և 7685 արտադրեալին աջ կողմէն երկու թիւ կը զատենք, որովհետեւ բազմապատկելիին մէջ երկու տասնորդական կայ :

22. Ի՞նչպէս կ'ընէք սասնորդական թիւերու բազմապատկութիւնը :

Վարժուքիւններ. — 153—165. Բազմապատկել. 2,78ը 4ով, 4,5ը 7ով, 4,783ը 6ով, 0,38ը 7ով, 0,456ը 7ով, 4,56ը 6ով, 4,56ը 7ով, 0,785ը 9ով, 0,034ը 8ով, 0,5ը 9ով, 0,05ը 9ով, 0,005ը 9ով, 0,0005ը 9ով. — 166. Գուլպայ գործող կին մը 9 երկտասնեակ գուլպայ կը ծախէ 540 դր. ի և կը վատակի ամէն մէկ գոյզին 2 դր. : Բանի զ՞ի նստած էր իր վրայ ամէն մէկ գոյզը :

17. ԳԱՍ. — ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆԵՐՈՒ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆԸ (Շար.)

23. Տասնորդականները բազմապատկելի. — Երկրորդ օրինակ. — Հիմա բազմապատկելու է 43,725 43,725ը (6,43ով) : Ինչպէս կը տեսնէք, բազմապատկելին ունի երեք տասնորդական, իսկ բազմապատկողը երկու հաս : Ուրեմն արտադրեալին մէջէն ստորակէտով զատելու է նինչ հաս տասնորդական : Արտադրեալն է 281,15175 :

23. — Բազմապատկեցէ՛ք 43,725ը 6,43ով :
Վարժուքիւններ. — 167—187. Բազմապատկելի. 8, 4ը 72ով, 17 28ը 65ով, 14,3ը 7,8ով, 174,5ը 3,7ով, 29,37ը 17,89ով, 23,785ը 7,9ով, 8,543ը 52 67ով, 0 528ը 1,38ով, 0 056ը 0,7ով, 0,0748ը 0,09ով, 0,7ը 0,9ով, 0 07ը 0 9ով, 0 007ը 0,9ով, 0,007ը 0,09ով, 0 007ը 0,009ով, 0,009ը 0 03ով, 0,06ը 0,003ով, 0,06ը 0,003ով, 0,01ը 0,01ով, 0,001ը 0,001ով, 0,7ը 0,7ով :


18. ԳԱՍ. — ՏԱՍՆՈՐԳԱԿԱՆԵՐՈՒ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆԸ (Շր.)

24. Փորձ. — Տասնորդական թիւերու բազմապատկութեան փորձը ակնբոյ թիւերու պէս է : Պէտք է արտադրիչներուն կարգը փոխել, այսինքն բազմապատկողը բազմապատկելի և բազմապատկելիին բազմապատկող ընել, յետոյ գործողութիւնը կատարել : Պէտք է որ միեւնոյն արտադրեալը տայ :

24. Տասնորդական թիւերուն բազմապատկութեան փորձը ի՞նչպէս կ'ըլլայ :

Վարժուքիւններ. — 188—221. Նախորդ երկու դասերուն բոլոր փորձերն ըրէք. — 222. Օղը 770 անգամ պակաս կը կընէ քան չուրը. իսկ անդիկը 13,59 անգամ աւելի կը կընէ քան չուրը. կրնա՞ք գտնել թէ

անդիկը բանի անգամ աւելի կը կշռէ բան օղը. — 223. Վաճառական մը 104 մէջը կերպաս գնեց, մէթըը 9 զրշ.ի և ուրիշ կերպասէ մ'ալ 215 մէթը գնեց, մէթըը 7 զրշ.ի. երկու կտորն ալ ծախեց եւ ընդամէնը շահեցաւ 477 զրշ. — կրննք ըսել թէ վաճառականը բանի զրշ.ի ծախեց տս երկու կտոր կերպասը:



19. ԴԱՍ. — ԵՌԹՆԵՐՈՐԿ ԱՄՍՈՒԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ (1—5)

1—5. Ամբողջ բիւերու բաժանումը. եթէ բաժանում ըրած տարիներս քանորդին մէջ մեծ թիւ մը դնենք, քանորդին ու բաժանարարին արտադրեալը մասնական բաժանելիէն չ'ելլեր: Այն ատեն քանորդէն 1 պակսեցնելու է:

Բաժանումը արագ ու պարզ կ'ըլլայ, եթէ մարդ վարժութիւն ընէ՝ քանորդին ամէն մէկ թուանշանը գտնելուն պէս, բազմապատկել բաժանարարը և անմիջապէս՝ առանց գրելու՝ հետզհետէ հանել մասնական բաժանարարէն:

Կրնայ ըլլալ որ մասնական բաժանելի մը աւելի փոքր գայ բաժանարարէն, այն ատեն քանորդին մէջ պէտք է դնել զերօ մը, յետոյ բաժանելիէն նոր թիւ մը վար առնել և գործողութիւնը շարունակել:

Բաժանումին փորձը կ'ըլլայ եթէ քանորդով բազմապատկենք բաժանարարը և մնացորդը ելածին վրայ գումարենք: Պէտք է այն ատեն բաժանելին ելլէ:



20. ԴԱՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ԵՌԹՆԵՐՈՐԿ ԱՄՍՈՒԱՆ (6—18)

6—16. Տասնորդական բիւերն անուանել. — Տասնորդը, հարիւրորդը, հազարորդը, եւն. միութեան (այսինքն մէկին) տասնորդական մասերն են:

Երբ միութիւն մը տասը հաւասար մասերու բաժանելէ յետոյ, անոր մէկ կամ մէկ քանի մասերը առնենք,

այս մասերը քաննորդական կոտորակ կ'ըսուին:

Թիւ մը որ տասնորդական մասեր կը պարունակէ, քաննորդական թիւ կ'ըսուի:

Տասնորդական թիւի մը մէջ, ստորակէտին աջ կողմի առաջին թիւը կը ցուցնէ տասնորդները, երկրորդ թիւը կը ցուցնէ հարիւրորդները, յետոյ հազարորդները, տասը հազարորդները և այսպէս կարգով:

Տասնորդական թիւ մը կարդալու համար, նախ ամբողջ մասը արտասանելու է, յետոյ տասնորդական մասը կարդալու է ամբողջ թիւի մը պէս. բայց վերջին թիւը քանիերորդ որ է, անունը այնպէս տալու է:

Տասնորդական թիւի մը արժէքն ամենեւին չի փոխուիր, եթէ անոր աջ կողմը զերօներ աւելցնենք, կամ գտնուած զերօները ջնջենք:

Տասնորդական թիւ մը 10ով, 100ով, 1000ով, եւն. մեծցուցած կամ պզտիկցուցած կ'ըլլանք, եթէ ստորակէտը զերօներուն չափ դէպի աջ կողմը տանինք, կամ դէպի ձախ կողմը բերենք:

17—24. Տասնորդական բիւերը հաշուել. — Տասնորդականներու գումարումն ալ հանումն ալ ճիշդ ամբողջ թիւերու պէս է: Միայն թէ գումարը կամ տարբերութիւնը գտնելէ յետոյ, պէտք է ստորակէտի սիւնակին տակ ստորակէտ մը դնել, այսինքն՝ տասնորդական թիւերն ամբողջ թիւերէն զատել:

Տասնորդականներու բազմապատկութիւնն ալ ամբողջ թիւերու նման է: Բազմապատկելու է երկու արտադրիչները, առանց ստորակէտին ուշադրութիւն ընելու: Բայց արտադրեալը գտնելէ յետոյ, համրելու է թէ երկու արտադրիչներուն մէջ քանի՞ հատ տասնորդական կայ, և այնքան տասնորդական արտադրեալին աջ կողմէն զատելու է:


ՆԱԽՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԱՍ. 1. — ԶԱՆՈՋԱՆ ԿԵՆՌԱՆԻՆԵՐ

1. Ոսկոր ունեցող կամ ողնաւոր կենդանիներ. — 1. Հարկաւ տեսած էք որ, երբ հաւի վառեկ մը կը մորթին, կը փետտեն ու եփելէ յետոյ միտը վրայէն կ'առնեն, կը մնայ սոկորները: Սա 48 պատկերը կը ցուցնէ վառեկի մը ամբողջ ոսկորները: Կատուն (Պատկ. 49) և շունը նոյնպէս ոսկորներ ունին:



Պատկ. 48



Պատկ. 49

Վառեկի մը ամբողջ ոսկորները: Կատուի մը ամբողջ ոսկորները:

Ասոր համար կ'ըսենք թէ վառեկը, կատուն, շունը ոսկոր ունեցող կենդանիներ են:

2. Դիտեցէք վառեկին ոսկորները, անոնց մէջ քանի մը հատեր կան որ իրարու ետեւէ շարուած են՝ վիզին, մէջքին ու պոչին վրայ (Պատկ. 48. Ո. Ո. Ո.): Այս պղզափկ ոսկորներուն անունն է ողն: Ասոնք ամէնքը իրարու միանալով կը կազմեն ողնայարը, ինչպէս տեսանք մարդու ոսկորներուն մէջ (Ա. Պրակ, 73 էջ, Յոդ դաս.): Նոյնպէս կատուն շատ մը ողներ ունի: Զեռքերնիդ


դրէք կատուի մը մէջքին վրայ ու շփեցէք դաջն, յայտնի կը տեսնէք անոր ոսկորիկները (Պատկ. 49, Ո. Ո. Ո.):

3. Այն բոլոր կենդանիները որ վառեկին ու կատուին պէս ոսկորներ ունին, անպատճառ ողնայար ալ ունին: Ասոնց կ'ըսուի ոսկոր ունեցող կամ ողնաւոր կենդանիներ: — Օրինակ. Շուն, օձ, ծածան (ձուկ), ծիծեռնակ, եւն:

1. — 1. Վառեկը, կատուն ոսկոր ունի: 2. Աս կենդանիները ողնաւոր ունի: 3. Ոսկոր ունեցող կենդանիները ի՞նչ կը կոչուին: Օրինակներ տւէք ողնաւոր կենդանիներու:

2. ԴԱՍ. — ԶԱՆՈՋԱՆ ԿԵՆՌԱՆԻՆԵՐ (Շար.)

2. Ողնաւոր կենդանիներու այլեայլ տեսակներ. — Ոսկոր ունեցող այն կենդանիները որոնց մարմինը մազերով ծածկուած է՝ ինչպէս կատուն, շունը՝ Ասեաւոր կենդանի կ'ըսուին, որովհետեւ սխիւք (ծիծ) ունին:



Պատկ. 50-53

Անողնայար կենդանիներու ցնդներ, a. Խղուց, b2. Խեչափառ, ե. Եւրմայր, U. Ծովազնի կամ եփնու:

Այն ստնաւոր կենդանիները, որոնց մարմինը փետուրով ծածկուած է, բոցյուն կ'ըսուին. ինչպէս ծիծեռնակ, բու, ագռաւ:

Կան ուրիշ ողնաւոր կենդանիներ ալ, որ մ'չ մազ ու-

սին ո՛չ փետուր, և սողալով կը քալեն, ասոնց կ'ըսուի սողուն. ինչպէս, մողէս, իժ :

Իսկ այն ոսկորաւոր կենդանիները որոնց մարմինը քեփերով ծածկուած է և որոնք միշտ ջուրի մէջ կ'ապրին՝ ինչպէս մորիւ, տարեխ, ծածան՝ կը կոչուին ձուկ :

3. Ոսկար չունեցող կամ անողնայար կենդանիներ. —

Դիւաժ էք արդեօք խղունջ մը կամ խեչափառ մը (Պատկ. 50—53 խ. ԽՉ.) : Ասոնց մարմինը շատ փափուկ է և ներսէն ոսկոր չունի, բայց դուրսէն երկուքն ալ կարծր պատեան ունին, ասոնց ոսկորը դուրսէն է :

Բայց երկրմայր մը (Պատկ. 50. Ե.) ո՛չ դուրսէն ո՛չ ներսէն ոսկոր ունի. ծովողնի կամ Լեքինոսը որ, ծովուն մէջ կ'ապրի, կլոր ու փշոտ կարծր պատեան մը ունի դուրսէն, բայց ճանճ մը ո՛չ դուրսէն ո՛չ ներսէն ո՛րեւէ կարծր բան չունի :


Ուրեմն խղունջ մը, խեչափառ մը, երկրմայր մը, Էքինոս կամ ծովողնի մը, ճանճ մը, Էւն. անոսկոր կամ անողնայար կենդանիներ են :

2. — Սնանուր կենդանիներու օրինակներ տւէք. քոչուններու, սողուններու, ձուկերու անուններ ալ րւէք : — 3. — Խղունջից, խեչափառից, երկրմայրից եւ ծովողնից կամ Էքինոսից ներսի ու դուրսի կողմը ի՞նչ կայ : Ոսկրաւոր կամ ողնաւոր են աս կենդանիները : Ի՞նչ ըսել է անողնայար :

3. ԴԱՍ. — ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

4. Ընտանի կենդանիներ. — Այն կենդանիները որ սովորաբար տան մէջ կ'ապրին ու մարդու ձեռքով կը խնամուին՝ ինչպէս կովը, ոչխարը, եզը, շունը, ձիւն կը կոչուին ընտանի կենդանի :

5. Կով, Ա.ՅԺ. 1. Կովը ու այծը ընտանի կենդանիներ են որ կաթ կուտան :



Պատկ. 54

Կովը կը կթեն գովին մէջ, անոր կաթն առնելու համար :

2. Կովերը, այծերը, ոչխարները սովորաբար (ամառ և գարուն) չեն թողո՞ր դաշտին մէջ, տեղ մը կը հաւաքեն զանոնք, գոյնի մէջ : Ու ամէն իրիկու նախիւրը աղմուկով գիւղէն ներս կը մտնէ և ամէն կենդանի կը ջոկուի իր տիրոջ տունը կ'երթայ :

Հոն՝ տանը մէջ՝ տանտիկիները կը կթեն զանոնք (Պատ. 54), և առտուանց, արօտավայրը զրկած ժամանակին, նոյնպէս կը կթեն :

Կաթէն կը պատրաստեն մածուն, սեր, կարագ :

4. — Ի՞նչ ըսել է ընտանի կենդանի : — 5. — 1. Ընտանի կենդանիներէն ո՞ր տեսակներ կաթ կուտան : 2. Սովորաբար ե՞րբ կը կթեն կովերն ու այծերը : Կարծի ի՞նչ կը շինուի :

4. ԴԱՍ. — ԸՆՏԱՆԻ ԿՆԵԴԱՆԻՆԵՐ (Շար.)

6. Ջի, է2, եգ, շուն, կասու. — 1. Ձին կը գործածուի կատքեր քաշելու և բեռներ կրելու համար, բայց շատ մը երկիրներ, ուր երկրագործութիւնը շատ առաջ գացած է, ձիերը արօրին կը լծեն: Էջը թէեւ քիչ մը փոքր բայց ձիուն ըրածները ինքն ալ կ'ընէ:

2. Եզը նոյնպէս կը գործածուի հողը հերկելու, բեռներ կրել սալու և սայլեր քաշելու համար: Ասկէ զատ մատողջ եզները, որոնց հորթ կ'ըսեն, կը պահեն, կը գիրքնեն մօրթելու համար:

3. Շունը մեզի օգտակար է. կայ որսի շուն (բարակ կա՛մ քերծէ), կայ արսնապան շուն (գամփա), հովուի շուն: Կասուն մէկ օգուտ ունի, այն է մուկ բռնել:



Պատկ. 55

Բակլին մէջ հաւերն ու քոչուկները կուզան ուսել իրենց կերը կամ կուտը:

3. Հաւնոցի քոչուկներ. — Հաւնոցին մէջ սիրուն

պղտիկ թռչուններ կան, ինչպէս հաւը որ հաւկիթ կ'ածէ, աղանիներ, սագեր, բաղեր և հնդկահաւեր: (Պատկ. 55):

6. — 1. Ի՞նչ բանի կը գործածուի ձին: Էջը: 2. Ե՞զը: 3. Շունը: Կասու՞ն: 7. — Հաւնոցի քոչուկներ բսէ՛ք:

5. ԴԱՍ. — ՄԵՂՈՒ

8. Փերակը. — Տեսած էք արդեօք մեղուի փերակներ գլուզի մը պարտէզներուն մէջ: Անոնք տեղ տեղ հողէ շինուած են, տեղ տեղ ալ փայտէ կամ յարդէ: Մեղուներն անոնց մէջ կը բնակին: Գարնան գեղեցիկ



Պատկ. 56

Յարդէ փերակներէն մեղրը կը հանեն:

արեւոտ օր մը գացէք հոն ու պիտի տեսնէք թէ մեղուները ի՞նչ եռանդով կ'աշխատին: Մեղուներէն ոմանք կը թռին կ'երթան ծաղիկներէն հիւթ ժողվելու, ուրիշ-

Նոր Գրքոց, Է. Պրակ

ներ արդէն մեղր ունին և կը բերեն կը ընցնեն մոմէ շինուած մեղրահացին կամ խորիսխին մէջ:


9. Մեղրը. — Սովորական փեթակները զանգակի ձեւով կողովի կը նմանին (Պատկ. 56): Ասոնց մէջ խորիսխներ կան: Այս մեղախորիսխները ժողվելու համար, մուխ կը փչեն փեթակներուն մէջ որ մեղուները թփրին ու չկրնան կճել: Մեղրը շատ առողջարար ուտելիք է և շաքարի տեղ կը բռնէ:

8. — Ի՞նչ կ'ընեն մեղուները՝ փեթակէն ելլելով ու նորէն հոն մտնելով: **9.** — Ի՞նչ կ'ընեն մեղրի խորիսխը փեթակէն հանելու համար:



6. ԳԱՍ. — ՇԵՐԱՄ


10. Շերամը. — Շերամը պղտիկ թըթուր մ'է (4, Պատկ. 57): Անկէ առաջ կուգայ թիթեռնիկ մը (Պատկ. 65), Նախ շերամը պղտտիկ հաւկիթէ (1, Պատկ. 57. մեծցած Աի մէջ) մը կ'ելլէ և կ'ըլլայ թըթուր. յետոյ այս թըթուրը կը խոշորնայ և շատ անգամներ կը փոխէ իր ձեւը (Պատկ. 57—63), և ամէնէն վերջը բոժոժի մը մէջ կը մնայ ու ներսէն թել կը հիւսէ: Բոժոժը կը սր ձեւ մը ունի, անոր մէջ մետաքսի թելէ պղտիկ կծիկ մը կայ (Պատկ. 64), որ փաթթուած է թըթուրին բոլորակը: Թըթուրը իր փորին մէջ կը պատրաստէ մետաքսին խփորը, յետոյ այսպէս կը մանէ զայն:



Պատկ. 57—63

Շերամի որդիւն մեծնալը: **1.** Հաւկիթ: **2.** **3.** **4.** **5.** ԲՅՐՈՒՆ: Ա. — Հաւկիթը խփորցած: Բ. — Թըթուրը խփորցած:

11. Մետաքսը. — 1. Շատ մը երկիրներու մէջ կը պահեն շերամը: Թուրքիոյ մէջ, Պրուսայի և Գամասկոսի կողմերն, աւելի շատ կը պահեն զայն: Շերամին կը կերցընեն թիթեռնի տերեւներ: Շերամին համար մեծ մեծ սրահներ կը շինեն, կը տաքցնեն այդ տեղերը, որոնց կ'ըսուի շերամատուն:



Պատկ. 64 Բոժոժ
Պատկ. 65 Թիթեռ

2. Շերամի թըթուրն իր բոժոժը շինելէ յետոյ անոր մէջ կը քնանայ և ստեն մը վերջ կ'արթննայ ու կը ծակէ բոժոժը՝ դուրս կ'ելլէ, թիթեռնիկի պէս: Բայց չեն թողուր որ ամէնքը այս կերպով դուրս ելլեն, որովհետեւ մետաքսի թելը կը կտրան: Ասոր համար, երբ կենդանին դեռ քնացած է, կ'առնեն բոժոժը, տաք ջրաշոգիին կը բռնեն, կենդանին կը մեռնի և անոր բոժոժը քակելով՝ կ'առնեն ան ընտիր մետաքսի թել, որ մէ պատուական ու թանկագին կերպաներ կը պատրաստեն:

10. — 1. Ի՞նչ է շերամը: Ի՞նչպէս կը մեծնայ: **11.** — 1. — Ի՞նչ տեսնուի կը սնուցանեն շերամը: Ի՞նչ կ'ընեն այն սրահներուն ուր կը պահեն շերամը: 2. Մետաքսը ի՞նչպէս կը գոյանայ:



7. ԳԱՍ. — ՎՆԱՍԱԿԱՐ ԿԵՆԳԱՆԻՆԵՐ

12. Զանգուան վնասակար կենդանիներ. — 1. Կենդանիներ կան որ ուղղակի մարդու վրայ կը յարձակին և կը բզբոտեն զայն կամ կը վնասեն անոր, ինչպէս

վազրը, առիւծը, արջը, իժը, շանաձուկը:

2. Կան ուրիշ կարգ մը կենդանիներ ալ որ նոյն-



Պատկ 66

Աղուէս



Պատկ. 67

Կուզ

պէս մնաստիար են, որովհետեւ մեր ընտանի կենդանիներուն վրայ կը յարձակին, ինչպէս, աղուէսները (Պատկ. 66), կուզերը (Պատկ. 67) որոնք հաւնօրէն կը մտնեն և հաւերը կը խղզեն:

3. Բազմաթիւ կենդանիներ կան որ հունձքերուն կը մնասեն: Ասոնք միջատներ են, օրինակ՝ ջրեակի թըրթուրը որուն անձնակ ուր կ'ըսուի և որ սուսկերու արմատները կը կրծէ: Մարսիլը որ երբեմն միլիոններով կ'ըջնէ դաշտերու վրայ և կը փճացնէ հունձքերը: Յիշխման որ պզտիկ աննշան միջատ մ'է, բայց այգիներու մէջ խաղողի սուսկերուն արմատները կը կրծէ, կը փճացնէ զանոնք:

4. Բանջարեղէնները կը կրծեն խորունցն ու շոյոսը:

5. Վերջապէս կան աւելի պզտիկ կենդանիներ որ բրդէ հազուամներ կը կրծեն, կը փճացնեն, ինչպէս ցեցերը:



Պատկ. 68

խորունց

12. — 1. Մարդուն վնասակար կենդանիներ քսէ: 2. Ընտանի կենդանիներուն վնասող կենդանիները որո՞՞նք են: 3. Հունձքերուն, 4. Բանջարեղէններուն, 5. Բուրդէ կերպասներուն վնասողները որո՞՞նք են:

8. ԳՍՍ. — ԱՄՓՈՓՈՒՄ ԵՐՅՆԵՐԻՈՐԴ ԱՄՍՈՒԱՆ

Ոսկոր ունեցող կամ ողնաւոր կենդանիներ. (1—2). — Ոսկորաւոր կամ ողնաւոր կ'ըսուի այն կենդանիներուն որ ոսկոր ունին և ողնայար: Ողնաւոր կենդանիներու գլխաւոր տեսակներն են. Սնաւորներ որոնց մարմինը մազերով ծածկուած է, քոչուներ՝ փետուրով ծածկուած, սողուններ որ կը սողան ու մերկ մարմին ունին, ձուկեր՝ թեփով ծածկուած են և կ'ապրին ջուրերու մէջ:

Անոսկոր կամ անողնայար կենդանիներ. (3). — Այն կենդանիները որ իրենց ներսի դին ո՛չ ոսկոր ո՛չ ալ ողնայար ունին, կ'ըսուին անողնայար կենդանի: Ասոնց մէջ շատեր արտաքին կարծր պատեան մը կ'ունենան, օրինակ. խղունջ, խեցգետին, երկրմայր, ծովաղնի:

Ընտանի կենդանիներ. (4—1). — Գլխաւոր ընտանի կենդանիներն են կովը և այծը որ կաթ կուտան և այս կաթին կը պատրաստուի կարագ ու պանիր: Նաեւ եղը, ձին, էջը, կատուն, շունը և հաւնոցի թռչունները:

Մեղուներ. (8—9). — Մեղուները կը բնակին փեթակներու մէջ, անոնք ծաղիկներէն հիւթ կը ժողվեն մեղր պատրաստելու համար: Մեղրը շաքարի տեղ կըրնայ բռնել և շատ առողջարար ուտելիք մ'է:

Շերամք. (10—11). — Շերամք թիթեղի տերեւներով կը կերակրեն շերամատուներու մէջ: Շերամք թըրթուրը կը շինէ մետաքսի բոժոժը, յետոյ ծակելով դուրս կ'ելլէ թիթեւնիկի պէս, ասոր համար տաք ջրաչողիլի մէջ կը մեռցնեն զայն որ մետաքսի թելը ամբողջովին քակեն:

Վնասակար կենդանիներ. (12). — Կենդանիներէն մէկ քանիները ուղղակի մարդուն վնասակար են. առիւծը, վազրը, արջը, իժը, շանաձուկը: Կան որ ընտանի կենդանիներուն կը մնասեն. ինչպէս աղուէսը, կուզը, գայլը: Ուրիշներ կան որ բոյսերուն և հունձքերուն մեծ վնաս կուտան, սպիտակ որդը, մարախը, ֆիլոքսերան: Վերջապէս ոմանք ալ բանջարեղէններուն կը վնասեն, ինչպէս խղունջը և շոյոսը:

Մ Ա Յ Ր Ե Ն Ի Լ Ե Ջ Ո Ւ

1. ԴԱՍ. — ԴԵՐԱՆՈՒՆ

1. Երեք դէմքեր. — Ինչպէս տեսանք (Բ. Պրակ, էջ 77, Դաս 11), Ես, դու, ան, ինք, մենք, դուք, անոնք, իրենք բառերը կը ներկայացնեն երեք դէմքերը :

2. Անճանական դերանուն. — Աս բառերը կը կոչուին անճանական դերանուն, ինչու որ անձի մը անունին դերը (պաշտօնը) կը կատարեն, անունին տեղը կը դրուին :

3. Անճանական դերանուններուն հոլովումը. — Անճանական դերանունները կը հոլովուին և խօսքի մէջ կ'ըլլան Տէր բայի, Սեռի խնդիր և Բնութեան խնդիր :

4. Ա. Դէմքի դերանունը սպպէս կը հոլովուի.

	Նզակի	Յոճակի
Ուղղական	Ես	Մենք
Հայցական	Իս	Մեզ
Սեռական	Իմ	Մեր
Տրական	Ինձի	Մեզի
Բացառական	Ինձմէ	Մեզմէ
Գործիական	Ինձմով	Մեզմով

1. Սա խօսքերուն մէջ որո՞նք են անճանական դերանունները :
Ես կը գորգորում մօրս վրայ, վասնզի շատ կը սիրէ դիս, և իմ օգտին համար կ'ընէ ամէն զոհողութիւն : Ինձի չի զլանար ամէն խնամք ու հոգածութիւն : Ինձմէ գատ ալ մէկը չունի որ սիրտի իր ցաւերը : Ինձմով կը զրօտի շարունակ : Ես ալ կ'աշխատիմ որ ինձմէ զոհ ըլլայ ամէն կերպով :

2. Օրինակեցէք եւ ստորագծեցէք անճանական դերանունները :
Մենք պարտաւոր ենք հոգալու մեր ծնողը երբ ծերանան : Մեզմէ կը սպասեն անկեղծ սէր ու հոգածութիւն : Մեզմով է որ կը

մխթարուի իրենց կեանքը. ու մեզ կը վնասեն ինչ վիճակի մէջ ալ ըլլան : Մահը միայն մարմնով պիտի բաժնէ մեզ մեր ծնողքէն . իսկ հոգիով մենք կապուած պիտի ըլլունք անոնց յիշատակին հետ որ մեզի շատ անուշ պիտի մուրի, մինչեւ որ մենք ալ աւարտենք մեր կեանքին ընթացքը :

3. Ժխտական ձեւով խոնարհեցէք **ԿԸ ԿԱՐԹԵՄ** բայը, այսպէս. Սանձ. եղանակ. Ներկայ՝ Ձեճ կարծեր, չես կարծեր, չի կարծեր, չենք կարծեր, չէք կարծեր, չեն կարծեր :

1. Որո՞նք են երեք դէմքեր՝ եզակի եւ Յոճակի : — 2. Աս բառեր ինչո՞ւ Անճանական դերանուն կը կոչուին : — 3. Անճանական դերանունները խօսքի մէջ ի՞նչ պաշտօն կրնան վարել : — 4. Առաջին դէմքի Դերանունը ի՞նչպէս կը հոլովուի :

2. ԴԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ԱՌՈՂՋԱՊԱՂՈՒԹԵԱՆ

Առողջութիւնը աշխարհի բարիքներուն ամենամեծն ու գլխաւորն է : Ուստի միտքդ պահէ՛ հետեւեալ կանոնները .

1. Չափազանց ուտելի ու խմելի և ամէն տեսակ շուսալուծիչէ՛ զգուշացիր :

2. Անմարսելի կերակուրներ մի՛ ուտեր :

3. Կեցած տեղդ, գործելու և պառկելու սենեակդ միշտ մաքուր օդ գանուի : Ամառը՝ միշտ, իսկ ձմեռը ստէպ բաց պատուհանդ :

4. Յանկարծական ցրտութենէ՛ զգուշացիր :

5. Քրտնած՝ պաղ ջուր մի՛ խմեր :

6. Սաստիկ տաքութենէ՛ զգուշացիր :

7. Զգայարանքդ չափաւոր գործածէ : Մութին մէջ կամ շատ նուրբ աշխատութիւններով աչք մի՛ յոգնեցնիր :

8. Ուժեղ վեր գործ մի՛ ընել. ծանր բան մի՛ վերցնել :

9. Քեզի չվերաբերող գործերու, կոխունքու մէջ մի' նետուիր:

10. Եթէ առողջութիւնդ խանգարի, բժիշկի դիմէ անյապաղ, և անոր խրատին անսա':

4. Վերի դասը կարդացէ, գոց սորվեցէ: Յետոյ նոյնը Ա. պառնի եզակի Գ. Դէմով ալ գրեցէ:

5. Գիծերուն տեղ յարմար բառերը դրէ: (Գ. Վարժապետ Մանկանց, էջ 25. Հրահանք, 22):

1. — կը գործածուի պատ ծեփելու: 2. Թամբը, սանձը, սապան-դակը, փոկը ձիու մը — են: 3. Անիւը, սոնակը, նստորանը, աղեղը, զարանակը, կոռքի մը — են: 4. — ով կը շինեն պնակ, գաւաթ, թակոյկ, ծաղկաման են: Իսկ — ով կը շինեն կրակարան, լսական, կոնք, շանիճ, խակին, եւն: 5. Ոսկին, արծաթը, երկաթը, զինկը, անագը, արոյրը գործածական — են: 6. Կիւերը կ'ունենան հետեւեւալ — ք. օղ, մանեակ, բայռ, սպարաշան, 7. Ոսկերիւ կը շինէ — ք. 8. Մկրատ, սանդ, կանգուն, եւն. դերձակի — են:

3. ԴԱՍ. — ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ (Շար.)

5. Բ. ԵՒ Գ. Դէմի դերանուններուն հոլովուը. — Անձնական կամ էական դերանուններուն Բ. և Գ. Դէմ-քերը կը հոլովուին այսպէս.

	Եզակի		Յոհեակի	
Ո. Դուն	Ան	Ինք	Դունք	Իրենք
Հ. Քեզ	Ան	Ինք	Չեզ	Անոնք
Ս. Քու	Անոր	Իրեն	Չեր	Անոնց
Տ. Քեզի	Անոր	Իրեն	Չեզի	Անոնց
Բ. Քեզմէ	Անկէ	Իրմէ	Չեզմէ	Անոնցմէ
Գ. Քեզմով	Անով	Իրմով	Չեզմով	Անոնցմով

Գիտելիք. — Հայցականները կրնան զ գիրն ունենալ, այսպէս. գեղ, գայն, գիւն, գնեզ, գանուն, գիրեւն.

6. Անձնական դերանուններուն պատճօնը. — Ես, դուն, ան, ինք, (Եզակի). մենք, դուք, անոնք, իրենք (Յոհեակի) Տէր բայի պաշտօն կը կատարեն, ինչու որ Ուղղական հոլով են:

Իս, քեզ, ան, ինք (կամ՝ զիս, զքեզ, զայն, զինք) Հայցական հոլով են և Սեռի խնդիր կ'ըլլան:

Ինձի, ինձմէ, ինձմով, քեզի, քեզմէ, քեզմով՝ և Տրական, Բացառական ու Գործիական հոլով եզոզ միւս բոլոր Անձնական դերանունները Բնութեան խնդիր կ'ըլլան խօսքի մէջ:

Իսկ Սեռական հոլով Անձնական դերանունները (խղ, քու, անոր, իրեն, մեր, ձեր, անոնց, իրենց) Յատկացուցիչ են: [Տե՛ս նաեւ Ստացական Դերանունը]:

7. Իրար եւ մէկգնիկ. — Անձնական դերանուն են նաեւ իրար և մէկգնիկ բառերը, որոնք կը հոլովուին սապէս. — Ուղղական (չունին), Հայց.՝ իրար, մէկգնիկ, Սեռ. և Տրակ. իրարու, մէկգնիկու, Բաց. իրարմէ, մէկ-մէկի, Գործ. իրարմով, մէկգնիկով: Յոհեակի չունին:

6. Սա Դերանունները վերլուծեցէ օրինակին պէս. Օրինակ. Անկէ — էական դերանուն, Գ. Դէմք, Եզակի, Բացառական հոլով Բնութեան խնդիր:

Անով, իրենց, ձեզի, իմ, անոնցմէ, քու, մեր, իրմէ, զքեզ, ինձմով, անոր, ինձմէ, քեզի, իրեն, անով, գնեզ:

7. Նոյն Դերանունները մէյմէկ խօսքի մէջ գործածեցէ, այսպէս. — Գտոր մը սճառ ունէիք, անով լուսացուցանք:

5. Բ. ԵՒ Գ. Դէմի Անձնական դերանուններն ի՞նչպէս կը հոլովուին: — 2 գիրն ո՞ր հոլովին վրայ կրնայ դուրիլ (*): — 6. Ի՞նչ պատճօն կը վարեն Ուղղական հոլով Անձնական դերանունները, Հայցականները, Տրականները, Բացառականները, Գործիականները, Սեռական հոլովները: — 7. Ի՞նչ են իրար եւ մէկգնիկ բառերը: Ի՞նչպէս կը հոլովուին:

(*) Դիտել տուէք Ձէ այս զ գիրին գործածուը զբարբէն մնացած է:

4. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

8. Արձակի վերածեցէ 2. Պրակ. էջ 58ի 8 դասը (ԹՈՒԲ) :

9. Նոյնը Յոնականի րէք, այսպէս.

Դուք խելոք հաշուով վաճառականներ եք, հող, փող ու սպրանք, գիտեմ, շատ ունիք. բայց երբ ձեր փողեկն, եւն.

10 Գրեցէ 3 հաս Որակական ամական, 3 հաս Յուցական ամական, 3 հաս Ստացական ամական, 3 հաս Թուական ամական եւ 3 հաս Անորոտ ամական :

11. Նոյն Ածականներուն հով դրէք մէյմէկ Գոյական :

12. Հարցումներուն պատասխանեցէ (Գ. Վրժ. էջ 41, Հրահ. 38) :

1. — Ե՞րբ շոգի կ'ըլլայ ջուրը :

2. — Ե՞րբ սով կը տիրէ տեղ մը :

3. — Ե՞րբ համահարակ կայ, կ'ըսուի :

4. — Ի՞նչ կ'ըսուի այստ մը որ ուրիշի կը փոխուի :

5. — Երկու անձ ինչ կերպով ժամադրուածին ըրած կ'ըլլան :

6. — Մարդ մը ինչպէս ուրիշի մը յաջորդ կարգուած կ'ըլլայ. Նսխորդ ինչ ըսել է :

7. — Ի՞նչ կը նշանակէ «Յակոր պարտական է Պետրոսին և Պետրոս պարտատէր» :

5. ԴԱՍ. — ՅՈՒՑԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆ

8. Հինգ տեսակ դերանուն. — Դերանուններն ալ հինգ տեսակ են. Անձնական, Յուցական, Ստացական, Յարաբերական, Անորոշ :

9. Անձնական դերանունները ստրկեցանք նախորդ դասի մէջ (Դաս) և 3, էջ 54, 56, 57) :

10. Յուցական դերանունները կը դրուին բան մը ցոյց տալու համար և ունին երեք դէմք.

Եզակի

Յոնականի

Ա. Դեմք.	Այս	Աս	Ատիկա	Սա	Ատոնք
Բ. »	Այդ	Ատ	Ատիկա	Տա	Ատոնք
Գ. »	Այն	Ան	Անիկա	Նա	Անոնք

11. Յուցական դերանունները կը հղովուին այսպէս.

	Եզակի	Յոնականի
Ուղղ. եւ Հայց.	Այս	Աս
Սեռ. եւ Տրական	Ատր	Ատրիկա
Բացառական	Ասկէ	Ատոնք
Գործիական	Ատով	Ատոնքով

12. ՍՍ. ցուցական դերանունը կը հղովուի այսպէս.

Եզակի.	Սա	Սուոր	Սըկէ	Սուով
Յոնականի.	Սուոնք	Սուոնց	Սուոնքմէ	Սուոնքմով

13. Մօտ եւ հեռու. — Այս, աւ, աւիկա, սուիկա կը ցուցնեն շատ մօտ բան մը, այդ, սա, աւիկա, սուիկա՝ քիչ մը հեռու բան մը, իսկ այն, նա, եւն, ցոյց կուտան հեռաւոր բան մը :

13. Այս Յուցական դերանունին պէս հոլովեցէք նաեւ Բ. եւ Գ. Դէմքեր :

14. Սահն պէս հոլովեցէք սա եւ նա Յուցական դերանունները :

15. Հետեւեալ դերանունները եզակի րէք միեւնոյն հոլովով : Ատոնքմէ, ատոնց, անոնք, սուոնքմէ, անոնքմով, ատոնց, սուոնք, նը-տոնքմով, սուոնց, ատոնք, ատոնքմով :

16. Հարցումներուն պատասխանեցէ (Գ. Վրժ. էջ 42, Հրահ. 39) :

1. — Ինչի մէջ կը դրուի սուրը :

2. — Ի՞նչը մորթով պատած է :

3. — Ի՞նչը խորիս կը կոչուի :

4. — Պահարանի մէջ ի՞նչ կը դրուի :

5. — Ի՞նչ է ցնցուղը :

6. — Ի՞նչ է հանքը :

7. — Որոնք Քրիստոնեայ կը կոչուին :

8. Քանի՞ տեսակ Դերանուն կայ : Որո՞նք են : — 9. Որո՞նք են Անձնական կամ Եական դերանունները : — 10. Ինչո՞ւ կը դրուին Յուցական դերանունները : Քանի՞ Դէմք են : Որո՞նք Ա. Դէմք են, Ո՞րոնք Բ. եւ որո՞նք Գ. Դէմք : — 11. Ի՞նչպէս կը հոլովուին : — 12. Սա Յուցական դերանունը ի՞նչպէս կը հոլովուի : — 13. Յուցականներէն որո՞նք մօտ եւ որո՞նք հեռաւոր առարկայ կը ցուցնեն :

6. ԴԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է շՐԵՇՏԱԿԸ

Պօղոս՝ գոց բրած արդէն իր համար՝
 Աւագին վրայ նստել կը խաղար :
 Բովն եր մեծ-մայրը՝ ձեռքին մեջ Սաղմոս,
 Ակնոցն ալ աչքը՝ կը կարդար անխօս :
 Յանկարձ՝ պատանին վագեց անոր ֆով
 Ու վիզը ցատեց : — Հանին՝ զարմանով՝
 «Անտառա՛կ, քո՛ղ տու օձիքս, ա՛լ հերիք :
 — Շաս լաւ, բայց խնդրեմ, բռե՛, մեծ-մայրիկ,
 Հրեշտակ, որ կ'ըսեն, ի՞նչ տեսակ բան մ'է,
 Մե՛ծ ե, պզտիկ ե՛ կ'աղաչեմ պատմե՛ : »
 Հանին՝ սիրալիւ նայուածով մ'անհուն
 Ըսաւ. « Հրեշտակը, դո՛ւն ես անա, դո՛ւն : »

17. Հարցումներուն պատասխանեցէք բերանացի ու գրաւոր :
 Ի՞նչ տեսակ բան է Պօղոսը — Յատուկ թէ Հասարակ. — Ի՞նչ ըսել է համար. — Ի՞նչ ըսել է Սաղմոս. — Ո՞վ գրած է զայն, — Կրօնական ուրիշ գիրքեր գիտէք. — Ի՞նչ ըսել է պատանի. — Կեանքի շրջանները որո՞նք են. — Ի՞նչ ըսել է հանքի, եւն.

18. Նոյն հասումին մէջի բայերը ստորագծեցէք :

19. Կէտերուն տեղ դրէք յարմար բառերը (Գ. Վարժ. էջ 43, Հրահ. 40) :

1. ... ը հեղուկ է. — 2. Մեր ... ը կուգայ ամպերէն. — 3. ... ը կը գործածենք լուսացելու, կերակուր եփելու, խմելու, եւն. — 4. ... ը երեք վիճակ ունի. հեղուկ, կազային և պինդ. — 5. ... ը կը ստուի երբ օդը սաստիկ ցուրտ է. — 6. ... կազային վիճակ առած ջուր է. — 7. ... կրնայ ծառայել մերենաներ շարժելու. — 8 ... կ'ըսուի այն ջուրը որ հանքային նիւթեր կը պարունակէ. — 9 ... կ'ըսուի այն տեղն ուրիկէ կը բղխի հոնքաշուր :

7. ԴԱՍ. — ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

14. Սացական դերանուններ. — Ստացական դե-

բանունները կը ցուցնեն թէ՛ բան մը որո՛ւնն է, և կը գործածուին առաջուց յիշուած անունի մը տեղ : Օրինակ

Ես իմ դասս կը սերտեմ, ան ալ իրենը թող սերտէ :
 Մեր սուներ մեծ չէ, ձերինը մեծ է :
 Դրիչ չունի՞ս, ա՛ն, խմիճովս գրէ :

15. Սացական դերանուններն են.

Եզակի

Ա. Դեմք.	Իմս	կամ	իմինս	Մերը	կամ	մերինը
Բ. »	Քուկդ	»	քուկինդ	Ձերը	»	ձերինը
Գ. »	Իրը	»	իրենը	Իրենցը	»	իրենցինը
	Անորը	»	անորինը	Անոնցը	»	անոնցինը

Յոնական

Ա. Դեմք.	Իմիններս	Մերինները
Բ. »	Քուկիններդ	Ձերինները
Գ. »	Իրենները	Իրենցինները
	Անորինները	Անոնցինները

20. Օրինակին պէս հոլովեցէ՛ք Սացական դերանունները.
 Օրինակ. — Իմինս, Իմինիս, Իմինէս, Իմինովս. — Իմիններս, Իմիններուս, Իմիններէս, Իմիններովս :


21. Սա Սացական դերանունները մէլմէկ խօսի մէջ գործածեցէ՛ք : Քուկիններուդ, ձերիններէն, իրեններով, իրենցինները, իմիններս, իրենէն, մերիններուն :

22. Սա Սացական դերանուններուն եզակի գրեցէ՛ք՝ հոլով անփոփոխ պահելով : Քուկիններէդ, իրենցինները, ձերիններուն, քուկիններուդ, մերիններէն, իմիններովս, իրեններէն, մերիններով, իմիններս, քուկիններովդ, իրենցինը, մերիններուն, անոնցինիս :

23. Սա ածականներուն Համանիւները (*) գտէ՛ք : Սպիտակ, քընքուշ, քաղցր, երկչոտ, Թանկագին, տըտում, փոքր, ուժեղ, խաւար, ստուեր, գուլ, անողորմ, տամբղի, նուրբ, զինջ, փափուկ, գոռոզ :

(*) Համանիջ՝ ըսել է միեւնոյն նշանակութիւն ունեցող բան :

14. Ի՞նչ կը յայտենն Ասացական դերանունները : — 15. Որո՞նք են : — Ի՞նչպէս կը հոլովուին : — Ասացական դերանունները Ասացական անվաններուն կը նմանի՞ն :



8. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

24. Էջ 54, Հրահանգ 1ը Յոնանկի վերածեցէք, այսպէս .
Մենք կը գուրգուրանք մեր մօրը վրայ, եւն :


25. Սա բայերուն հով երեքական բառ դրէք, իբրև Տէրբայի :
Օրինակ. — Ձին, շունը, տղան կը վազէ : (Տես Բ. Վարժ. էջ 152. Հրահանգ 126) :

1. Հոյս կուտայ (ո՞վ, ի՞նչը) : — 2. Խոտ կ'ուտէ : — 3. Կը տեղայ :

4. Կը բուսնի : — 5. Կը Հասուննայ : — 6 Կը մարի : — 7. Կը վառի :

26. Եզակիի վերածեցէք 54էջի, 2. Հրահանգը, այսպէս .
Ես պարտաւոր եմ հողալու իմ ծնոցս, եւն :

27. Գրեցէք 3 Նախադասութիւն Ձարմացական ձեւով, 3 հաս ալ Հարցական ձեւով :



9. ԴԱՍ. — ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆ

16. Յարաբերական դերանուն կը կոչուի որ բառը և կը հոլովուի այսպէս .

	Եզակի	Յոնանկի
Ուղղ. եւ Հայցական	Որ	Որոնք
Սեռ. եւ Տրական	Որուն	Որոնց
Բացառական	Որմէ	Որոնցմէ
Գործիական	Որով	Որոնցմով

Գիտ. — Հայցականի մէջ որ յարաբերականը կը գործածեն նաեւ գոր (Եզակի) գորոնք (Յոքնակի) ձեւերով, Ուղղականին հետ չչփոխելու համար :

17. Յարաբերակ. — Յարաբերական որ բառը իր մէջ առաջ կ'ուսնայ յարաբերակ մը (Անուն կամ Դերանուն). Օր. — Հացը, գոր եւ կոտակ, իմ մարմինս է :

Աս խօսքին մէջ յարաբերակն է հացը :


18. Յարաբերական դերանունի դէմք. — Յարաբերական Դերանունը ամէն դէմքի տեղ կը գործածուի : Ես որ կը խօսիմ, դուն որ դեռ պզտիկ ես, ան որ, մենք որ, դուք որ, անոնք որ, եւայլն :

28. Սա խօսքերուն մէջ որոշեցէք Յարաբերականներուն թիւը, հոյնը եւ դէմքը : Գտէք նաեւ յարաբերակները :
Աս դասը, գոր կը սորվինք, մեզի օգտակար է : — Այն մարդը, որով դրամ ո' գեցի, հայրս է : — Սիրենք Աստուած որ մեզի պարգեւած է ամէն բարիք : — Այժերը, որոնցմէ կամ կ'օգեցինք, մեր հովուինն են : — Ալիւրը, որով հաց կը շինենք, աղացուած ցորեն է :

29. Որ յարաբերականը վեց հոլովներով գործածեցէք մէյմէկ խօսքի մէջ :

30. Որ յարաբերականը ի՞նչ պատճառ ունի սա խօսքերուն մէջ (Տէրբայի՞ է, Սեռի խնդի՞ր, Բնութեան խնդի՞ր քէ Յասկացուցիչ) :
Այն կառքերը, որոնցմով ճամբորդեցինք, վարձու են :
Վարդունին, որուն մայրը մեռաւ, շատ տխուր ու սգաւոր է :
Հայրս նաեւկ մը գեցց, որով պիտի զբոսնենք լիճին վրայ :
Ես չեմ կարողացած այն գիրքը գոր կը գովեմ :
Աղբատը, որուն հաց աուիր, ձեր ու անկար է :
Պէտք է միշտ օգնել անոնք որոնք կարօտուած են մէջ են :

16. Ո՞ր բառ Յարաբերական դերանուն կը կոչուի : Ի՞նչպէս կը հոլովուի : Հայցականը ուրիշ ի՞նչ կերպ կը գործածուի : — 17. Ի՞նչ է Յարաբերակ : — 18. Յարաբերական դերանունը ի՞նչ դէմք կ'առնէ :



10. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

31. Սա բայերուն Աներեւոյթը գտէք :
Կե'ր, գացինք, եկաւ, է, պիտի լայ, կ'ուտեմ, կ'երթայի, Թո՛ղ, մեծցուր, Թո՛ւք, խառնէ, կերայ, ուղեցին, Ըր'իւր, կ'ընեմ, գտայ, պիտի մըտնէի, իջէք, հեծ'իւր, առիք, խառնելու, պիտի Թքնեմ, պնգ, մեռան, Թը. աւ, զոյցով, տեսար :

32. Նոյն բայերը մէյմէկ խօսքի մէջ գործածեցէք :

33. Ըսէ՛ք ի՞նչ կ'ընեն
Եկեղեցիին մէջ, Ղարոցին մէջ, դատին մէջ, բաղնիքին մէջ, պանգո-

կին մէջ, Յատրոնին մէջ, փռուին մէջ, արհեստանոցին մէջ, հանքին մէջ, ծովին մէջ, պարտէզին մէջ, անտառին մէջ, սեղանատան մէջ, Կնշարունին մէջ, հիւրանոցին մէջ, աւազանին մէջ, խնկամանին մէջ, սրբատուփին մէջ, կոնքին մէջ, զերեզմանատան մէջ, այգիին մէջ, հնձանին մէջ, շտեմարանին մէջ, մառանին մէջ, կարասին մէջ, ջերմոցին մէջ:

11. ԴԱՍ. — ԱՆՈՐՈՇ ԳԵՐԱՆՈՒՆ

19. Անորոշ դերանուն են Անորոշ ամականները երբ առանց Գոյականի զործածուած են:

20. Անորոշ դերանունները յօդ կ'առնեն և կրնան հորվալի:

21. Անորոշ դերանուններն են. Ամէնը, բոլորը, ուրիշը, մէկը, ամէն մէկը, ո՛չ մէկը, միւսը, մէկալը, նոյնը, միևնոյնը, մէկ քանին, ասանկը, այսչափը, քանի՞ն, ո՞վ, ո՞րը, ո՞րչափը, ի՞նչը, այսինչը, բան մը, ոչինչ, ամէն ինչ, ոմանք, ևւն:

34. Հարկեցէք սա Անորոշ դերանունները.

- 1. Ամէնը, մէկը, ոչ մէկը (*):
- 2. Ո՞վ, ո՞րը:
- 3. Նոյնը, ոչինչ, ո՞րչափը, բոլորը, քանի՞ն, ասանկը, շատը:

35. Սա Անորոշ դերանուններն ի՞նչ բիւ եւ ի՞նչ հորվոյ են.

Ամէնէն, մէկուն, ոչ մէկուն, ոչ մէկով, որո՞ն, նոյնին, ոչինչէն, ո՞րչափին, որո՞նց, որոնցմօ՞վ, ո՞րչափներու, միւսներէն, ուրիշներու, մէկէն, որոնցմէ՞, ինչերո՞ւ, ոչինչի, ամէն մէկէն, ոչ մէկու, նոյնէն, այսչափով, քանիներո՞ւ, ասանկներով:

36. Անորոշ ամականներ եւ Անորոշ դերանուններ զանազանեցէք հետեւեալ խօսքերուն մէջ.

Որը՞ կ'ուզես: — Ո՞ր փողոցը կը նստին: — Նոյն օրը գալու էիր. — Նոյնը բեզի ալ պիտի տամ: — Շատ մարդ կը ծանցուած, բայց ո՛չ մէկը մտերիմս է: — Ո՞րչափ զրամ ունիս: — Այսչափը հերիք է ինձի: — Ո՞րչափ տալու եմ բեզի: — Երեք եղբայր ունիմ, մէկը կօշկակար է, մէկը

(*) Ամէնը, ամէնուն, —մէկը, մեկուն, — ո՞վ, ո՞րը, ու՞ն ևւայլն:

ծարտարապետ, իսկ միւսը զբաշարութիւն կ'ընէ: — Ի՞նչ է ուզածդ, ի՞նչ արհեստ պիտի սովորիս: — Շատը վնաս է: — Շատ մարդ կայ:

37. Կէտերուն հեղ յրէք յարմար բառերը (Գ. Վարժ. էջ 46, Հրան. 43):

- 1. Գիւզապետ կը կոչուի ... (հվ):
- 2. Գիւզախմբապետ կը կոչուի ... (հվ):
- 3. Փօփ կառավարիչ կը կոչուի ... (հվ):
- 4. Կառավարիչ կամ Գուտարապետ կը կոչուի ... (հվ):
- 5. Կուսակալ կը կոչուի ... (հվ):
- 6. Կայսր կը կոչուի ... (հվ):

19 Ո՞ր բառեր Անորոշ դերանուն են: — 20. Անորոշ դերանուններ յօդ կ'առնեն՞, կը հորվալին՞: Ի՞նչպէս կը հորվալին: — 21. Գոց ըսէք Անորոշ դերանունները:

12. ԴԱՍ. — ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ

Մ Ր Զ Ի Ի Ն Ն Ո Ւ Տ Ղ Ա Ն

Պըզսիկ ու սեւ մրջյուններ
Իրենց կըլոր ծակին փոլ
Սըկէ նըկէ փըռուներ
Ֆերեն դիզեն արեւով:

Օրն ամառին արեւոս
Կ'երբան հեռու, հեռու սեղ
Հասիկ, հունսեր ու ծրլոս
Կըսցեն, կըրեն միասեղ:

Ես կը սիրեմ մրջյունին
Ներալ դիսել սքնակը,
Կը սիրեմ միտ օրն օրին,
Գճնել իրենց փաբակը:

Մրջի՛ւն, մրջի՛ւն սեւուլիկ,
Ես ալ անա քեզի պես
Գործ մը կ'ընեմ պըզսիկի,
Որ մարդ դառնամ իրապես:

15. ԳԱՍ. — ԱՅԼԵՒԱՅԼ ՏԵՍԱԿ ՄԱԿԻՍՅԱՆԵՐ

25. Եղանակի մակբայներ. — *Լաւ, զեշ, աղիկ, դիտնաւք, կանաց, շոտ եզանակ ցուցնող Մակբայ են:*

26. Ժամանակի մակբայներ. — *Առաջ, ետք, հիմա, այսօր, վաղը, երեկ, արդէն, դեռ, կանուխ, ուշ, երբեմն:*

27. Տեղի մակբայներ. — *Շուրջը, մօտը, հոս, հոն, հեռուն, ուր, վեր, վար, ներս, դուրս, առջեւ, ետեւ, դեմ, դիմաց:*

28. Քանակ կամ չափ ցուցնող մակբայներ. — *Շատ, քիչ, աւելի, միայն, աչ, չափազանց:*

29. Հարցական մակբայներ. — *Ո՞րչափ, ի՞նչպիս, ինչո՞ւ, ե՞րբ, ո՞ւր, ուսկի՞ց, ուրի՞նչ:*

30. Հաստատական մակբայներ. — *Այո՛, անշուշտ, իրաւ, միշտ, հարկաւ:*

31. Քաջտատական մակբայներ. — *Ո՛չ, չ, մի, բնաւ, երբեք, ամենեւիս, ոչինչ:*

32. Տարակուսական մակբայներ. — *Թերեւս, գուցե, արդեօք, միթե, եւն:*

33. Յուշական մակբայներ. — *Ահա, սնտաւայիկ:*

43. Վերոյիշեալ Մակբայները գրեցէք այբուբենի կարգով՝ խառն:

44. Նոյն ինը տեսակ Մակբայներէն մէյմէկ հաս գործածեցէ՛ք ինը խօսքի մէջ:

45. Կէտերուն տեղ դրէ՛ք յարմար բառեր: (Գ. Վարժ. էջ 47, Հրան. 44):

1. *Խնկատուփի մէջ կը ծխեն ...* 2. *... տան մ'է որուն մէջ կը զննն Ս. Հարդրութիւնը կամ օրհնուած նշխարը* 3. *Սրբութիւն տանել կամ ճաշակուիլ՝ ըսել է ...* 4. և 5. *Քրիստոնեաները... տարին 5 անգամ, այսինքն հինգ տաղաարներուն՝ Քանոնային խոստովանելով և ապաշխարելով:* 6. *Շուրջառը, վահառը, փորուբարը, Թաղը եւն. ժամարարին ... են:* 7. *Քրիստոսի կեանքը պատմող գիրքն է ...* 8. *Սաղ-*

մաս, Ժամագիրք, Մաշտոց, Պատարագատերք, Շարակնոց եւն եկեղեցական ... են:

25. *Որո՞նք են եղանակի մակբայներ:* — 26. *Ժամանակի՞:* — 27. *Տեղի՞:* — 28. *Քանակի՞:* — 29. *Հարցում նշանակող Մակբայները որոնք են:* — 30. *Ի՞նչ կը ցուցնեն Հաստատական մակբայները եւ որո՞նք են:* — 31. *Քաջտատականներ՞:* — 32. *Տարակուսականներ՞:* — 33. *Յուշական մակբայներ՞:*

16. ԳԱՍ. — ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ

34. Նախադրութիւն. — *Կրնամ ըսել. Գիրքս սեղանին վրայ է: — Գիրքդ սեղանին սակն է:*

Աս խօսքերուն մէջ, վրայ և սակ բառերը ցոյց կուտան թէ՛ գիրք և սեղան բառերուն մէջ յարաբերութիւն մը կայ: Վրայ Նախադրութիւնը կը միացնէ գիրք և սեղան բառերը: Տակ Նախադրութիւնը, նոյնպէս, կը միացնէ գիրքն ու սեղանը:

35. Նախադրութիւնը բառ մ'է որ Գոյականին կամ Դերանունին քով կը դրուի՝ բային հետ անոր յարաբերութիւնը ցուցնելու համար:

36. Նախադրութեան խնդիր. — *Նախադրութեան քովը դրուած բառը (Անուն կամ Դերանուն) կը կոչուի Նախադրութեան խնդիր: Վերի օրինակներուն մէջ վրայ և սակ Նախադրութիւններուն խնդիրն է սեղանին:*

46. Աս խօսքերուն մէջ ո՞ր բառերը Նախադրութեան խնդիր:

1. *Գիրքերդ պայուսակիդ մէջ դիր:* 2. *Ծառերուն վրայ հասուն պտուղներ կան:* — 3. *Արաղառը կը խօսի առտուրնէ ի վեր:* — 4. *Ես հօրս հետ կ'աշխատիմ:* — 5. *Դուն մօրդ քով կեցիր:* — 6. *Քեզի պէս տղայ չեմ տեսեր:* — 7. *Ճաշէն ետք զրօսանք պիտի ընենք:* — 8. *Մեր դրան առջեւ երկու ծառ կայ:* — 9. *Անոց հետ զնն:*

47. Կէտերուն տեղ դրէ՛ք յարմար Ածականները (Գ. Վարժ. էջ 48, Հրան. 45):

- 1. Լեռի վրայ եղող երկիրները կ'ըսուին . . . : — 2. Թէ ծովու մէջ և թէ ցամաքի վրայ ապրող կենդանիներ կ'ըսուին . . . : — 3 Ուրիշին փոխանցուող հիւանդութիւնները կ'ըսուին . . . : — 5. Կալուածի համար վճարուած առքերը կ'ըսուին . . . : — 6. Շատ զեղեցիկ ու մեծ շէքերը կ'ըսուին . . . : — 7. Չապառուած պատահող բաները կ'ըսուին . . . : — 8. Սրտէ թղթած խօսքերը՝ աղօթքները կ'ըսուին . . . : — 9. Առատ վազող ջուրերը, արցունքները կ'ըսուին . . . : — 10. Երկու մտքի մէջ եղող մարդիկը կ'ըսուին . . . : — 11. Անմշակ պարտէզները, արտերը, եւն. կ'ըսուին . . . : — 12. Տեղ մը խռնուած շատ մը մարդիկ կ'ըսուին . . . :

34-35. Ի՞նչ է նախադրութիւնը եւ ի՞նչ կ'ընէ : — 36. Ո՞ր բաներ կը կոչուին նախադրութեան խնդիր : — Նախադրութիւնը իր խնդիրէն առաջ կը դրուի թէ վերջ :

17. ԳԱՍ. — ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ (Շար.)

37. Խնդիրէն առաջ դրուող նախդրութեան. — Առանց, վասն, բացի, իբրեւ, միևնչեւ, դեպ ի :

38. Խնդիրէն ետքը դրուող նախադրութիւններ. — Վրայ, սակ, քով, մեջ, մօտ, առջեւ, ետեւ, առաջ, ետք, հասար, վեր, վար, դեմ, պիս, գոտ, մեկտեղ, ներս, դուրս, հասար, չափ, համեմատ, համեմտ :

39. Նախադրութեան խնդիրին հոլովը. — Նախադրութիւններն այլեւայլ հոլով խնդիր կ'առնեն, այսպէս .

1. Սեռական հոլով խնդիր կ'առնեն սա Նախադրութիւնները. — Ներքեւ, դիտես, առջեւ, ետեւ, վրայ, սակ, մեջ, քով, տեղ, փոխանակ, միջեւ, եւն :

2. Տրական հոլով կ'առնեն. — Հասար, հետ, առանց, միևնչեւ, դեմ, չափ, մօտ, պիս, համեմատ, համեմատ :

3. Բացառական հոլով կ'առնեն. — Զոտ, բաց ի, ի վեր, դուրս, ներս :

4. Հայցական հոլով կ'առնեն. — Ի վեր, ի վար, ի բուն, միևնչեւ, դեպի :

48. Շեղագիր բառերուն տեղ ուրիշ Գոյականներ դրէք : Յետոյ նոյն բառերով խօսքեր շինեցէ՛ք օրինակին նման :

Ետեւն վրայ, պահն քով, վրանի տակ, սեղանին բոլորտիքը, հողին ներքեւ, շուն ի վեր, սնունդին մէջ, շուկային մօտ, ձիովը մէկտեղ, դասն առջեւ, գրիչն ետեւ, ինձե՛կ ետքը, Աստուծոյ համար, հացին հետ, տեղի չափ, խառնարան վերեւ, հովին դէմ, Ս. Մեսրոպի պէս, պարտէզին դիմաց, ասիկ գոտ, դասես առաջ, դաշտին մէջտեղ, առանց աշխատութեան, մինչեւ գերեզման. դեպ ի մայրը :

Օրինակ. — Ետեւն վրայ կուտ մը բայ չէ մնացեր :

49. Այլեւայլ հոլովներով Գոյականներու հետ մէլմէլ նախադրութիւն կցելով՝ խօսքեր շինեցէ՛ք :

50. Գտէ՛ք սա նախադրութիւններուն ներմակը. (Տե՛ս Լրացուցիչ Քերականութիւն, էջ 16. — Հրահանգ Բ.) :

Հակառակ, հետ, հետ, վար, առջեւ, տակ, ներս, գոտ, մօտ, միտին, ետեւ, դուրս :

37. Ո՞ր նախադրութիւններ իրենց խնդիրէն առաջ կը դրուին : — 38. Որո՞նք խնդիրէն ետքը կը դրուին : — 39. Ի՞նչ հոլով կ'առնէ նախադրութեան խնդիրը :

18. ԳԱՍ. — ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

40. Գոյականը վերլուծելու համար պէ՛տք է ըսել՝ Յասն՝ի է թէ Հասարակ, եզակի՝ թէ Յոյնական, և ի՞նչ հոլով է : Յետոյ, ըսել նաեւ թէ ի՞նչ պաշտօն ունի խօսքին մէջ. Տերբայի՞, Սերի խնդիր, Բերութեան խնդիր, Յասկացուցի՞ կամ Յասկացեալ :

Օրինակ. — Հայրս իմի համար նոր կոշիկներ դնեց : Աս խօսքին մէջ հայրս բառն է Հասարակ անուն եզակի ուղղական, ս Իմորոջ յոդով . Տերբայի է գնեցին :

51. Վերլուծեցէ՛ք սա խօսքեր :

1. Լսե՛րք դեռ հոգած է՛ի : — 2. Մերանը թղթիս վրայ Թափեցու : — 3. Մեր հոգով կը կշտանանք :


52. Որո՞նցե՛ք հետեւեալ առարկաներուն համար : Շարք . բոցախ : բողկ, ծովի ջուր, մեղր, կոտեմ, սոխ, աղբի : առօր, կիտրոն, սխտոր, անուխ, Թրմնջուկ, նուռ, Թուզ :

40. Գոյականը վերլուծելու համար ի՞նչ բաներ ըսելու է :

19. ԴԱՍ. — ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

53. Սահմաններուն համապատասխանող բառերը գտե՛ք եւ գրե՛ք կէտերուն տեղ, (Գ. Վարժ. էջ 49, Հրահ. 46) :

1. Գիծ մը որ աղիղի պէս լարուած է կամ ծիրանի զօտիլ ձեւ ունի , կը կոչուի ... : — 2. Կէտէ մը ուրիշ կէտ քաշուած ամենէն կտրծ գիծն է ... : — 3. Իրարու կցուած շատ մը ուղիղ գիծեր ... : — 4. Ուղիղ քաշուած գիծ մը ... : — 5. Ամբողջ երկայնութեամբ իրարմէ, հաւասարապէս հեռու եզրղ երկու գիծեր ... : — 6. Հորիզոնին ուղղութեամբ քաշուած գիծ մը ... : — 7. Կոր գիծ մը որուն բոլոր կէտերը հաւասարապէս հեռու են կեղտոն կոչուած ներքին կէտէ մը ... : — 8. Շրջանակի մը մէկ մասը' ... : — 9. Ուղիղ գիծ մը որ շրջանակին երկու կէտերը կը միացնէ' ... : — 10. Երբ երկու ուղիղ գիծ իրարու հանդիպին , կը կազմեն ... մը : — 11. Մակերես մը որ երեք ուղիղ գիծերով շրջապատուած է' ... :



20. ԴԱՍ — ԱՄՓՈՓՈՒՄ 14, 15, 16, 17, 18 ԴԱՍԵՐՈՒ

Մակըաց. — Մակըացը անիտիտի բառ մ'է կը գրուի բայերուն քով, և կը ցուցնէ գործողութեան եղանակը, ժամանակը, տեղը, փանակութիւնը (չափը) կամ հարցում, հաստատութիւն, քաջատրքիւն, տարակոյս, եւն :

Մակըացը կրնայ երկու կամ աւելի բառերէ կազմուիլ, այն ատեն կը կոչուի Բաղարեալ մակըաց :

Նախադրութիւն. — Նախադրութիւնը անիտիտի բառ մ'է որ երկու բառի (Գոյականի կամ Դերանունի և Բայի) մէջ յարաբերութիւն կը ցուցնէ :

Նախադրութիւն առնող բառը (Անուն կամ Դերանուն) կը կոչուի Նախադրութեան խնդիրը :

Նախադրութիւններէն մէկ քանին իրենց խնդիրէն առաջ կը գրուին, մէկ քանին ալ ետքը :

Ամէն նախադրութիւն միեւնոյն հարմար խնդիր չ'առնիր :

Անուն մը վերլուծելու համար պիտի գործադրուին 22-ի անակնիչ, ինչ թիւ է, ինչ տեղի է, և ինչ ստորոն կը կրտսարէ խօսքին մէջ :



Ն Ո Ր Դ Պ Ր Ո Յ
ՆԱԽԱԿԻԹՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹՈՍՅՔ
ՀԱՄԱԿԵԳՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԸ

10.—Դպրոցական տարին 10 ամիս ըլլալով՝ ՆՈՐ ԴՊՐՈՅՆ ալ տասը Պրակներու բաժնուած է: Մէն մի Պրակ կը պարունակէ մէկ ամսուան մէջ ուսանելի առարկաներէն ամէն այն ճիւղերը, որոնք պարտաւորիչ են Նախակրթութեան Դասընթացքին համար:

20.—Դասերու աւանդումը ճշդող ժԱՄԱՆԱԿԱՅՈՅՑՅՐը տպուած է վեցերորդ Պրակին մէջ, իսկ շարձական ԴԱՍՅՈՒՅՄԱԿՆԵՐԸ որոշուած են Թ. Պրակին կցուած յաւելումական Թերթով մը:

30.—ՆՈՐ ԴՊՐՈՅԻ պարունակութեան և մեծոտին վրայ մանրամասն խօսուած է ՇՐՉԱՔԵՐԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՄԱԿԻՐ անուն մասնաւոր Պրակին մէջ (որ փափարողներուն ձրի կը զրկուի), ինչպէս և Ա. Պրակին սկիզբը: Անոնց ընթերցումը կը յանձնարարենք ամէն Ուսուցչի:

40.—ՆՈՐ ԴՊՐՈՅԸ ճիմուած է Համակերպոն Դրութեան վրայ, հետեւողութեամբ Ուսուցչապետ Ա. Սէնեէղի համանուն գործին, որ մեծ հռչակ հանած է և կը գործածուի Եւրոպական առաջնակարգ դպրոցներու մէջ:

50.—ՆՈՐ ԴՊՐՈՅԻՆ շնորհիւ կարելի կ'ըլլայ հաստատել կանոնաւորութիւն և միօրինակութիւն՝ բոլոր Հայ դպրոցներու մէջ ուր ընդունուած է:

60.—ՆՈՐ ԴՊՐՈՅԸ ամէնէն լուսամիտ առաջնորդն է Հայ Ուսուցչիին և անոր կը Թեւադրէ ժամանակակից կրթութեան ողին և մանկավարժութեան գործնական եղանակները:

70.—ՆՈՐ ԴՊՐՈՅԸ կարելի է ստանալ զատ զատ Պրակներով և կամ 10 պրակը միասին կազմուած:

80.—Ամբողջ 10 Պրակին զինն է Պոլսոյ համար 30 դրուշ, գաւառներու համար 35 դրուշ, արտասահմանի համար 8 ֆրանք (3 ռուպլի): Փոսթի ծախքը մեր վրայ է:

90.—Պրակները զատ զատ կը ծախուին Ծական դրուշի:

100.—Տասը ձեռք մէկէն գնողը 1 ձեռք նուէր կը ստանայ:

استانده سرکه جیده خوراسانجیمان خاندہ سمپاط افدی داودیان

Հասցէ. — ՍՄԻՍ Է.Ֆ. ԴԱՒԹԵԱՆ

Խօրասանէան իսան, Սիրէսի, Կ. Պոլիս